№ 8 (109) X ՏԱՐԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՄԻՈՒԹԻՒՆ ԹԻՒՐՔԵՐԻ ՀԵՏ

Ներկայ խնդրի մասին խօսելու մեզ առիթ է տալիս „Դրօշակի" նախընթաց համարում տպագրած Տամատ Մահմուդ փաշայի նամակը, որ հայերին ուղղած մի ընդհանուր կոչ է միանալու Թիւրքերի հետ։ Մենք յարմար ենք համարում այդ նամակի առիթով յայտնել մեր կարծիքները նաև ընդհանրապէս բոլոր Թիւրք հակասուլթանական կամ՝ աւելի ճիշդն ասած՝ հակահամիդական տարրերի մասին, որովհետև՝ չնայելով այն բոլոր տարբերութիւններին և երբեմն նոյնիսկ փոխադարձ թշնամական յարաբերութիւններին, որ գիտուում են դրանց մէջ, այդ տարրերը բոլորն էլ վերջին ժամանակներս, մեծ համերաշխութիւն են արտայայտում, երբ հարցը գալիս է հայերի հետ միանալու խնդրին։

Կար ժամանակ, որ մենք էինք Թիւրքերին անդադար միացած կռւի հրաւիրում և զարմանում նրանց անտարբերութեան վրայ դէպի Տաճկաստանի ընդհանուր ողբալի վիճակը։ Կար ժամանակ, որ մենք էինք նրանց բացատրում մարդկային ամենալայն գաղափարներով ներշնչուած մեր ծրագիրը, որպէսզի նրանք քներկիւղ մնտենան, հասկանան մեզ և աջակցեն ընդհանուր գործին։ Կար վերջապէս ժամանակ, որ ամէն անգամ, երբ մեր կոչերին արձագանք տուող ուեէ անկեղծ ձայն էինք լսում մեր Թիւրք հայրենակիցների բանակից, մենք ամբողջ յօդուածներ էինք նուիրում „Դրօշակում"՝ այդ առիթներով մեր հրճուանքը արտայայտելու համար։ Իսկ այժմ... այժմ դերերը փոխուել են. այժմ „միութեան" հրաւէրները անդադրում կերպով տեղում են Թիւրքերի կողմից, և մենք ենք, որ՝ չնայելով մեր ամենաբուռն համակրանքին դէպի սկզբունքը, այսօր տարաբախտաբար ստիպուած ենք անվճռողական դիրքի մէջ մնալ։

Պատճառը պարզ է։ Ձայները այնտեղից չեն լսուում, որտեղից մենք վաղուց իվեր շարունակ սպասում ենք, և այն դիւթիչ ձայները չեն դրանք, որոնք ուժեր են կազդուրում, սրտեր են վառում, եղբայր եղբօրը ճանաչեցնում... Ինչպէս միութեան գաղափարը — այն գաղափարը, որ դեռ 10 տարի առաջ մենք ընտրել ենք իբրև հիմնական կէտ մեր ծրագրում—պահանջեց այսքան տարիներ երիտասարդ Թիւրքերի շրջաններում և համակրութիւն գտնելու համար, երեւի նոյնպէս տարիներ կը պահանջեն՝ մինչև որ կիրագործուի այդ միութիւնը՝ ազգով ! տարբեր, բայց միևնոյն թշնամու դէմ կռուող տարրերի մէջ։

„Միանա՞նք"—գեղեցիկ միտք. բայց ո՞ւմ հետ և ի՞նչպէս։

Հայ յեղափոխականները վաղուց են հրապարակի վրայ և վարում են արդէն այն կռիւը, որի անունով մեզ հրաւիրում են միանալ։ Իսկ ո՞ւր են Թիւրք-կռուողները... Մինչև այժմ մենք տեսանք անհատներ, խմբեր, թղթի պրօպագանդայով պարապողներ, բայց չտեսանք գործով կռուողներ, գործի պրօպագանդիստներ։ Կտրուած բուն տաճիկ ժողովրդից և յենուած սակաւաթիւ Թիւրք ինտելիգենցիայի մի աննշան մասի վրայ, երիտասարդ-Թիւրքերը մնում են դեռ ևս „յեղափոխութիւնը իվերուստ" հասկացող պոլիտիկաններ, թոյլ անկազմ և հետևաբար դեռ ևս անգործ, խօսքի մարդիկ...

Խօսելու համար միանա՞նք։

Եւ երանի թէ գոնէ խօսքի պրօպագանդը տանէին դրանք այն ճշմարիտ ուղղութեամբ, որը համապատասխանում է տաճիկ ժողովրդի ժամանակակից կուլտուրական պահանջներին։ Թերթեցէք երիտասարդ Թիւրքերի հրատարակութիւնները, և դուք չէք գտնի նրանց մէջ ոչ մի կռիւ տաճկական կեանքի այն ներքին կաշկանդիչ գործօններին դէմ, որ մենք՝ հայ ժողովրդի կեանքում չենք խնայել երբէք և հարուածել ենք ոչ պակաս քան արտաքին թշնամուն։—„Մեր պատմութիւնը եւրոպականից բարձր է, մեր հաւատահամբերութիւնը աւելի"—գրում է մէկը։—„Չկայ Տաճկաստանում ոչ մի չարիք, որ աւելի մեծ չափերով գոյութիւն չունենար լուսաւորուած կոչուող Եւրոպայում"—լրբաբար կրկնում է անդադար միւսը *)։ — Միակ չարիքը սուլթան

*) Օրինակի համար յիշենք այստեղ թէկուզ միմիայն ապագայ սուլթանական սենեկապետացուների բոյն՝ „Մէշվերէթ" լրագրի սեպտեմբեր ամսւայ համարի երկու յօդուածները — „Ինչո՞ւ" և „Մեղաւոր են թէ՞ ոչ"։ Այդ յօդուածներից առաջինում լրագիրը, իրեն յատուկ երկդիմի, ճիզուիթական ձևերով, զայրանում է այն բողոքի դէմ, որ բարձրացնում են եւրոպացիք ու եւրոպական լրագիրները Սպաղանքի կոտորածի առիթով և արդարացնում է իրողութիւնը հարցնելով՝ ինչո՞ւ Անգլիա և Ֆրանսիա կարող են Աֆրիկայում սպանութիւններ անել իսկ քիւրդը կամ տաճիկը իրենց երկրներում չեն

Համիդի անձնաւորութիւնն է և Տաճկաստանի քառորդ դարուայ ամբողջ տագնապը՝ միայն նրա քմահաճոյքների արդիւնք։ Չի լինի Համիդը, և Տաճկաստանը կը դառնայ օրինակելի երկիր, — ահա ինչ են միաբերան կրկնում բոլոր երիտասարդ Թիւրքերը, ահա զանազան ձևերով համեմած ինչ հոգևոր սնունդ են մատակարարում նրանք իրենց ժողովրդին, ընկճելով նրա անսահման տգիտութեան առաջ, խոնարհելով նրա կոյր աւանդապահութիւնների, կրօնական և այլ սպանիչ նախապաշարմունքների դիմաց ու կամայ-ակամայ շոյելով նրա հակակուլտուրական հակումները...

Որանց հետ միանա՞նք։

Անկասկած, հէնց այդ պրիմիտիվ աշխարհահայեացքով է բացատրւում և այն երևոյթը, որ երիտասարդ Թիւրքերը, մեծից սկսած մինչև փոքրը, հայկական հարցի վերաբերմամբ միշտ ներշնչւած են միևնոյն ոգով, այսինքն՝ հայկական հարցի համար, իբրև միջազգային խնդրի համար, ոչ մի արդարացուցիչ հանգամանք չտեսնելու հակումներով, հայերի կրած սարսափները նրանց թշւառ գլխին փաթաթելու պատրաստականութեամբ, հայկական կոտորածները անուղղակի ձևերով արդարացնելու տրամադրութիւններով և վերջապէս մի այնպիսի պահանջկոտութեամբ դէպի մեզ, որ կարծես Թիւրք ժողովուրդն է մեծապէս վնասւել հայերից և վերջիններս են, որ դեռ մի բան պարտական են նրան։ Սա արդէն չարիքի գիտակցութիւն չէ, սա մեր սպասած թարմ, գաղափարական հոսանքը չէ, սա „առանց խտրութեան կրօնի և ազգի“ խնդիրներ դնող և այդ խնդիրներով տանջւող գործիչների ընթացք չէ, այլ միմիայն թուլացող տաճկական պետութեան քաղաքական արտաքին դիրքը պահպանելու ճիգեր — ճիգեր, որոնք իբրև թէ անպատճառ պահանջում են հայկական և ուրիշ հարցերի կտարեալ չէզոքացումը Տաճկաստանում։ Ահա սրանք, այս մարդիկն են, որ այսօր միութեան ձեռք են մեկնում մեզ։ Եւ եթէ մենք միշտ պատրաստ ենք ընդունել այնպիսի ձեռքեր, որոնք ընդունակ կը լինեն հայերին դիմելիս զգալ իրենց պատմական հրեշաւոր յանցանքը, ամաչել և սոսկալ այն անօրինակ ոճիրի դիմաց, որ կատարւեց հայերիս վերաբերմամբ իրենց դժոխք երկրում և իրենց ժողովրդի աչքի առաջ, եթէ մենք պատրաստ ենք ձեռք մեկնելու այնպիսի թիւրքերին, որոնք ամէն րոպէ կը գիտակցեն հայ ժողովրդի անօրինակ դժբախտութիւնը և քաղաքացիական համարձակութիւն կունենան թէկուզ արար-աշխարհի առաջ և ամէն հանգամանքներում բարձրաձայն գոչելու՝ թէ այնպիսի մի սատանայական կառավարութեան դէմ, ինչպիսին տաճկականն է, հայերը իրաւունք ունէին և ունեն ինչ միջոցների էլ ասես դիմելու, — ապա այդ գիտակցութիւնից և քաղաքացիական այդ զգացմունքից զուրկ ձեռք մեկնողների դիմաց մենք կարող ենք միայն բացականչել՝

Ի՞նչպէս ընդունել այս ձեռքերը, որ ուզում են միայն մեր ձայները խեղդել...

Եւ յետոյ։ Երիտասարդ Թիւրքերը կարող են ցոյց տալ մի խումբ, որ ընդունակ լինէր մեզ հաւատ ներշնչել դէպի իր բարոյականը նոյնիսկ այն փոքրիկ գործերում, ուր մենք միշտ կարող էինք համերաշխաբար ընթանալ։ Քանի-քանի շանտաժիստներ տեսանք մենք ներկայումս գոյութիւն ունեցող բոլոր կուսակցութիւնների, բոլոր խմբերի մէջ։ Անուններ չտանք. դրանք շատ լաւ յայտնի են մանաւանդ իրենց Թիւրքերին։ Միակ հայը, Անմեղեան անունով, որ ոտով-գլխով յարել էր „Մէշվերէթի“ խմբակին, նա էլ իր կարճատև թղթեայ գործունէութիւնը „Մէշվերէթի“ մթնոլորտում վերջացրեց կաշառւելով սուլթանից և վերադարձաւ Պոլիս պաշտօնի։ Դժուար է խոստովանել, որ երիտասարդ-Թիւրքութիւնը այժմ ապրուստ ճարելու, անձնական կարիերա ստեղծելու մի սինօնիմ է դարձել Եւրոպայում։ Չկան համոզւած մարդիկ, չկան անձնուրաց գործիչներ, չկան բարոյական մաքուր բնազդների տիպարներ, որոնց հետ միայն կարելի է կապւել յեղափոխական կռւի տատասկոտ ճանապարհին...

Ո՞ւմ հետ միանանք՝

—

Իսկ ո՞րն է այն ծրագիրը, որ պէտք է համախմբէ տաճկահպատակ բոլոր նեղւողներ, բոլոր դժգոհ ու բողոքող տարրերին. ի՞նչ պէտք է ընդունւի բոլորիս համար պարտաւորեցուցիչ նպատակ և որոնք են այն միջոցները, որ պէտք է հասցնեն մեզ մեր նպատակին։

„Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը“ — որի անունից միայն իհարկէ մենք իրաւունք ունենք խօսելու — ընդհանրացնելով Տաճկահայաստանի վերաբերեալ իր ծրագիրը, կարող է առաջարկել համայն Տաճկաստանի համար մի կազմակերպութիւն, որը — միւս հաւասար

Համիդի անձնաւորութիւնն է և Տաճկաստանի քառորդ դարուայ ամբողջ տագնապը՝ միայն նրա քմահաճոյքների արդիւնք։ Չի լինի Համիդը, և Տաճկաստանը կը դառնայ օրինակելի երկիր, — ահա ինչ են միաբերան կրկնում բոլոր երիտասարդ Թիւրքերը, ահա զանազան ձևերով համեմած ինչ հոգևոր սնունդ են մատակարարում նրանք իրենց ժողովրդին, ընկճելով նրա անսահման տգիտութեան առաջ, խոնարհելով նրա կոյր աւանդապահութիւնների, կրօնական և այլ սպանիչ նախապաշարմունքների դիմաց ու կամայ-ակամայ շոյելով նրա հակակուլտուրական հակումները...

Որանց հետ միանա՞նք։

Անկասկած, հէնց այդ պրիմիտիվ աշխարհահայեացքով է բացատրւում և այն երևոյթը, որ երիտասարդ Թիւրքերը, մեծից սկսած մինչև փոքրը, հայկական հարցի վերաբերմամբ միշտ ներշնչւած են միևնոյն ոգով, այսինքն՝ հայկական հարցի համար, իբրև միջազգային խնդրի համար, ոչ մի արդարացուցիչ հանգամանք չտեսնելու հակումներով, հայերի կրած սարսափները նրանց թշւառ գլխին փաթաթելու պատրաստականութեամբ, հայկական կոտորածները անուղղակի ձևերով արդարացնելու տրամադրութիւններով և վերջապէս մի այնպիսի պահանջկոտութեամբ դէպի մեզ, որ կարծես Թիւրք ժողովուրդն է մեծապէս վնասւել հայերից և վերջիններս են, որ դեռ մի բան պարտական են նրան։ Սա արդէն չարիքի գիտակցութիւն չէ, սա մեր սպասած թարմ, գաղափարական հոսանքը չէ, սա „առանց խտրութեան կրօնի և ազգի“ խնդիրներ դնող և այդ խնդիրներով տանջւող գործիչների ընթացք չէ, այլ միմիայն թուլացող տաճկական պետութեան քաղաքական արտաքին դիրքը պահպանելու ճիգեր — ճիգեր, որոնք իբրև թէ անպատճառ պահանջում են հայկական և ուրիշ հարցերի կատարեալ չէզոքացումը Տաճկաստանում։ Ահա սրանք,

---

կարող իրենց հասկացած ձևով դադաստան կապել հայ աւազակների հետ։ Երկրորդ յօդւածում „Մէշվերէթը“ կրակ է թափում եւրոպացոց վրայ, որոնք բողոքեցին թէ Դիարբէկիրի հերոս Ենիս-փաշայի Հալէպ նահանգապետ նշանակելու դէմ և թէ Բիթլիսի զինւորական հրամանատար Ալի-փաշայի դէմ, որ հեղինակ եղաւ Սպաղանքի և ուրիշ գիւղերի կոտորածին.

„Սուլթանի և մանաւանդ ներքին գործոց նախարարի պարտքն է՝ պաշտպանել իր պաշտօնեաների պատիւը և օրինաւոր վարմունքը“, — թելադրում է լրագիրը և շարունակում. — „Սպաղանքի դէպքը տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ գերմանական կայսրը հրամայում էր Չինաստան գնացող իր զինւորներին ոչ մի գթութիւն ցոյց չտալ դէպի նրանց, որոնք կը դիմադրեն զէնքով։ Եթէ Վիլհելմի այս խօսքերը ուղղւած լինէին Ալի փաշային, նա իր հերոսական գործերի համար վարձատրութիւն կըստանար“։

պայմաններում — անշուշտ ընդունակ է միացնել բոլորին։ Դա ֆեդերատիվ (դաշնակցական) ռամկավարական կազմակերպութիւնն է, որի համաձայն տաճկահպատակ բոլոր ժողովուրդները կազմում են մի անխախտ ամբողջութիւն, բայց իւրաքանչիւրը իր ներքին, տեղական ինքնավարութեամբ։ Երիտասարդ Թիւրքերը դրա տեղ դնում են Միթհադ-փաշայի սահմանադրութիւնը՝ կարծելով, որ դա միանգամայն բաւարարութիւն կըտայ բոլոր տարրերի կուլտուրական պահանջներին։

Մենք իհարկէ այն տեսակ մտածողներից չենք, որոնք զանազանութիւն չեն գտնում սահմանադրական և միապետական կարգերի մէջ։ Ոչ. մենք ընդունում ենք առաջինի բոլոր բարեբեր առաւելութիւնները երկրորդի դիմաց։ Բայց Տաճկաստանին հարկաւոր են not meausures, but men (ոչ թէ միջոցներ, այլ մարդիկ) — ասել են Տաճկաստանը ճանաչող մարդիկ, և Հատտի-Շէրիֆ-Գիւլխանէն 1839 թւին, տաճիկ կառավարութեան արած „ընդհանուր բարենորոգումների“ անվերջ խոստումները 1844 ու 1850 թւերին, Հատտի-Հիւմայունը 1856 թւին և Սահմանադրութիւնը 1876 թւին, իբրև կենդանի օրինակներ՝ գալիս են հաստատելու այդ հայեացքը։ Այո, ամբողջ մի դարի ընթացքում բոլոր վերանորոգիչ փորձերը անցան Տաճկաստանի պատմութեան էջերով իբրև մեռած խօսքեր, իբրև կեանքի չվերածուելու համար ստեղծուած անբնական օրէնքներ, որովհետև Տաճկաստանը կուլտուրական կեանքի համար անպատ է, որովհետև նրա ժողովուրդը դեռ ևս տգէտ է, իսկ տաճկական իշխող բիւրօկրատ-ինտէլիգէնցիայի և հոգևորականութեան մէջ տիրում է արևելեան սպանիչ մթնոլորտը։ Ահա ինչու մեր թիւրք հայրենակիցները մեզ ոևէ յոյս ներշնչելու համար պէտք է մօտենան մեզ՝ թողնելով „ընդհանուր բարենորոգումների“ հին երգերը, որոնք վաղուց արդէն խլացնում են մեր ականջները և որոնք սակայն մարդավայել կեանքի ձգտող տաճկահպատակ ժողովուրդներին մինչև այսօր ուրիշ ոչինչ չեն տուել բացի սիստէմատիք կոտորածներից։

Համաձայն վերոյիշեալ not meausures, but men բանաձևին, Տաճկաստանում այն ժամանակ կը լինի ոևէ իրական փոփոխութիւն, երբ երկրում կը կազմւի մի համերաշխ քաղաքակիրթ ուժ, որ ընդունակ լինէր այս կամ այն կարգերը հաստատելու և պահպանելու։ Ընդունելով ֆեդերատիվ պետական կազմակերպութեան նպատակը միայն՝ կարելի է ներկայումս կազմել մի այդպիսի ուժ։ Այսօր կենդանի փաստեր են՝ հայկական, մակեդոնական, ալբանական, յունական, արաբական և ձեր շարժումները։ Պարզենք բոլորի առաջ Օտտոմանեան Դաշնակցութեան եղբայրական դրօշակը. խրախուսենք այդ շարժումները բոլոր կարելի միջոցներով. անկեղծ գործակցութեամբ փոխադարձ վստահութիւն ներշնչենք, որ իւրաքանչիւր ժողովըրդի էական պահանջները գոհացում կըստանան. տենդային ջանքերով պատռենք և ձեր ժողովըրդի գիտակցութիւնը պատող խաւարը, — և մեզ կը յաջողւի համախմբել բոլոր տաճկահպատակ ժողովուրդների առաջադէմ, օրինապահ և ազնիւ տարրերը, որոնք՝ միասին վերցրած՝ և կըտան երկրին այն ուժը, որի կարիքը զգացւում է։ Եւ եթէ վերջապէս դուք հաւատում էք սահմանադրութեան բարեբեր հետևանքներին, թողէք նախ՝ ընդհանուր նպատակի առաջ միանան, իմի ձուլեն բոլոր տարրերը, իսկ նրանից յետոյ կեանքի ընթացքը, ժամանակի պահանջները ինքնըստինքեան ցոյց կըտան՝ թէ որքան անհրաժեշտ է մինչև Օտտոմանեան Դաշնակցութեան հաստատուելը՝ ընդունել իբրև իջևան, իբրև անցողական մի շրջան — ձեր փայփայած սահմանադրութիւնը։ Բայց դուք, երիտասարդ թիւրքերդ, հակառակ էք դրան, և մէկ Սուլթանին փոխելով՝ պատրաստ էք մեզ էլ չխնայել։

Ի՞նչպէս հետևենք ձեզ...

Գալով միջոցների խնդրին, այստեղ ևս դրութիւնը անորոշ է։ „Օսմանլին“ միակ խումբն է, որ յայտարարել է իրեն յեղափոխական, իսկ „երիտասարդ թիւրքեր“ են իրենց անուանում բոլոր բողոքողները, բոլոր դժգոհները։ „Մէշվէրէթը“ իրեն „կարգի և յառաջադիմութեան“ կողմնակից համարելով՝ հանում է իր ծրագրից յեղափոխական միջոցները։ Տամատ-Մահմուտ փաշան պարզ չէ խօսում այն ձևերի մասին, որոնցով կարելի է „ջնջել հայրենիքը կեղեքող բռնակալութիւնը“, և՝ եթէ ներելի լինէր ենթադրութիւնների մէջ մտնել, միայն կարող էինք ասել, որ յամենայն դէպս նա „կարգի և յառաջադիմութեան“ կուսակցութիւնից շատ աւելի է առաջադէմ։

Ո՞ր միջոցների վրայ պէտք է կայանայ միութիւնը՞

Հայրենակիցներ. մենք խօսեցինք ամենայն անկեղծութեամբ — այնպէս, ինչպէս խօսում ենք ինքներս մեզ հետ և ինչպէս վայել է լուրջ հարցերի դիմաց։ Եթէ տեղ-տեղ մենք ստիպուած եղանք խիստ լեզու բանեցնել — դա բացատրւում է ոչ թէ մեր կոշտութեամբ, այլ միակ ցանկութեամբ՝ չթողնել ոչ ներկայի և ոչ ապագայի համար մութ, անորոշ կէտեր։ Իսկ մի անգամ էլ ձեր առաջ մեր տրամադրութիւնները շեշտելու համար՝ աւելացնում ենք և հետևեալը.

Թիւրքեր. մենք չենք ձգտում ոչ հայ թագաւորութեան վերականգման, ոչ թէկուզ 100 մարդուց միայն բաղկացած ոևէ ազգութեան սպառնող գերիշխանութեան, ոչ էլ անպատճառ ձեր պետութիւնից անջատուելուն։ Մեր դրութիւնը պարզ է. ինչպէս ձեզ վիճակուած է գործել ձեր ժողովըրդի մէջ, նոյնպէս էլ մեզ համար աւելի յարմար է մեր ժողովըրդի պէտքերին հետևել։ Եթէ մենք այսօր կոչում ենք բարձրաձայն՝ „Կեցցէ հայկական շարժումը“, „Կեցցէ հայ յեղափոխութիւնը“ —

դա չէ նշանակում, որ մենք միշտ պատրաստ չենք նոյն ոգեւորութեամբ նաեւ կոչելու՝ „Կեցցէ՛ ընդհանուր օսմանեան յեղափոխութիւնը“, „Կեցցէ՛ ընդհանուր օսմանեան անկախութիւնը“։ „Աշխատաւոր դասակարգերը իրենց բնական և բազմակողմանի զարգացման համար կարիք ունեն իրենց ազգերի անկախութեան ոչ պակաս, քան ընդհանուր ձայնատուութեան, կապակցութիւնների և մամուլի ազատութեան“. „միջազգայնութիւնը չէ հերքում ազգայնութիւնը, այլ նշանակում է միայն ազգերի ազատութիւն և հաւասարութիւն“, — ասում է յայտնի Կաուցկին։ „Միջազգայնութիւնը նոյնքան հակառակ չէ ազգայնութեան, որքան սօցիալիզմը՝ անհատականութեան, այսինքն անհատի զարգացման“. „առանձին ազգերի անհատականութիւնը մարդկութեան համար նոյնն է, ինչ որ հասարակութեան համար անձնաւորութիւնների անհատականութիւնը“ — պնդում է Լիբկնեխտ, և մենք, ինչպէս տեսնում էք, չենք հակասում և չպիտի հակասենք միջազգայնութեան գաղափարին։

Այո՛, լինելով հայեր, գործելով հայերի մէջ, մենք մնում ենք մարդիկ և չենք կարող ուրիշներին պակաս ցանկանալ, քան ուզում ենք մեզ համար։ Ուրիշի հաշւով ապրողների կամ նրանց իրաւունքների սահմանափակման վրայ իրենց իրաւունքները հիմնողների վատութիւնը եթէ մենք չիմանայինք, սուլթանների տիրապետութիւնը միայն բաւական կը լինէր դրանում մեզ համոզելու համար։ Տւէք մեզ ուէ հաւաստիք, որ միանալով ձեզ հետ՝ դրանով մենք չենք ապահովի միայն ձեր հանգստութիւնը՝ թէ հայկական հարցը յաջողաբար խեղդեցիք և որ այդ հարցից այլեւս վտանգ չկայ օսմանեան գերիշխանութեան և նրա վաղեմի աշխարհակալ փառքին, այլ դրանով ձեռք կը բերենք թիւրք ինտելիգենցիայի մի արժանահաւատ ուժը, որ կարող է բարեփոխել մեր ժողովրդի դրութիւնը, — և մենք յեղափոխականին վայել աւիւնով կը վազենք ձեր շարքերը ամրապնդելու։

Բայց երբ կը լինի այդ․․

I

Վե՜հ ազատութեան սէրը չէ մենակ,
Որ ինձ մղում է կուի վառ հանդէս, —
Հրեղէն ոսն է, վրէժն՝ անյատակ,
Որ սիրտս է այրում ժահր-թոյների պէս․․

Ա՜խ, թէ լինէի կայծակ-հրաբուղխ
Մռայլ Տաւրոսի ճակատից վիժած,
Պիտի փշրէի, շանթէի պիտի
Թշնամու կուրծքը չա՛ր, արիւնախանձ․․

Բայց հոգուս խորքում օձեր են զեռում, —
Վրէժի իժե՜ր — սև՛, կծի՛կ-կծի՛կ.
— Ու ռումբ է սիրտս, և պիտի պայթի,
Թշնամու գլխուն նա՛ պիտի պայթի․․

II

Է՜յ, ջա՛ն-հայրենիք, ի՜նչքան սիրուն ես,
Սարերդ կորած երկնի մովի մէջ.
Ջրերդ՝ անո՜ւշ, հովերդ՝ անո՜ւշ,
Մենակ բալէքդ արուն-ծովի մէջ։

Քու հողին մեռնիմ, անգի՛ն հայրենիք,
Ա՜խ, քիչ է, թէ որ մի կեանքով մեռնիմ.
Երնէ՛կ ունենամ հազար ու մի կեանք,
Հազարն է՛լ սրտանց քեզ մատաղ անեմ։

Ու հազար կեանքով քու դարդին մեռնիմ,
Բալէքիդ մատա՛ղ, մատա՛ղ քու սիրուն.
Մենակ մի կեանքը թո՛ղ ինձի պահեմ, —
Է՛ն էլ քու փառքի գովքը երգելուն, —

— Որ արտուտի պէս վե՜ր ու վե՜ր ճախրեմ
Նոր օրւայ ծէգիդ, ազի՛զ հայրենիք,
Ու անո՜ւշ երգեմ, բա՛րձր ու զի՛լ գովեմ
Կանանչ արեդ, ազա՛տ հայրենիք․․

ՀԱՅ-ՔՈՒՍԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՎԱՆԷՆ

20 յունիս

Կառավարական գանձին պատարկուելու նը անօթի չունենր ըրած է կառավարական. մանաւանդ ոստիկանութեան պաշտօնեաները, որոնք կաշխատին իրենց երեւակայութեան զօր տալով, նորանոր խնդիրներ երեւան հանել՝ թէ գործունեայ երեւնալու եւ թէ իրենց էնթրիկներու ենթականերն կեղեքելով՝ ապրելու համար։ Գողեր, ամբարտականներ իրենց պաշտպանութեան տակ կը շրջին քաղաքին ու այգեստաններն եւ ամէնքն ալ գիտեն, թէ ոսկոր մը նետելով Հիւսնիի, Մէմէտի. Ապօյի, Մկրտիչի առջեւ ուղածնուն պէս կրնան շարժել, արդ համայնելով ամէն պատարան ու արդարութիւն։ Յեղափոխական խնդիրներ յուզելու եւ զրպարտութիւններ ընելու համար յիշեալ կոմիսարներու աջակից են կարգ մը շահամոլ եւ անխիղճ հայեր, որոնց պարագլուխներն են մամիկ Զարրգճեան, քէօր Աբրահամը եւ Վազգէնի հին ընկեր՝ գաւաճան Յովհաննէս Սէմէրճեան, որ անցեալ տարի կառավարութեան ձեռք յանձնեց Խաչիկ անունով մի երիտասարդ՝ քանի ոսկիի փոխարէն, զոր ստացաւ քէօռ Աբրահամի միջոցով։

Եօթ ութ ամիսներէ ի վեր Արծկէ գաւառի 20-21 հայ գիւղերու կողմէ մէկ քանի գիւղապետներ տեղիս կառավարութեան գրած էին՝ հայտարանցի համիտէներու պէտ եւ Զէքի փաշայի սիրական՝ դաժան քէօր Հիւսէին փաշայի անգթութիւններու եւ խժդժութիւններու դէմ բողոքելու եւ թէ վերջինին միջոցով իրենց գիւղերը բռնի գրաւած քիւրդերը դուրս հանելու համար։ Եւ իրաւ, այդ գիւղերը, որ Սիփանի ստորոտը կը գտնուին, բոլորովին այդ մարդակերպ գայլի կամայականութեան ենթարկուած են։ Իր զօլամներն ամէն գիւղ եւ ամէն տուն մուտք ունին, շատ մը հայ աղ-

չիկնէր (աւելորդ է յականէ անուանէ ըսել) բանի փախ-չուցած եւ մահմետական դարձուցած են, իրենց հա-կառակող մէկ երկու մելիքներ սպաննած, կարգ մը գիւղերու մէջ հայերու տուներ բնակութիւն հաստատած եւ ուրիշ անթիւ քրդական բարբարոսութիւններ։ Գիւ-ղացիներ, ամէն վտանգ աչք առած՝ գովելի միութեամբ մը թէ Բարձրագոյն Դուռը եւ թէ պատրիարքարանը ահագին ծախքերով հեռագիր քաշելով՝ ճար մը խնդրած էին իրենց անել վիճակին։

Կառավարութիւնը զարմացած եւ միանգամայն յուսա-հատած անոնց օրինաւոր, բայց ձ ա ն ձ ր ա լ ի դիմում-ներէն, վերջապէս հաճած էր զօրք հանել անոնց գիւղերն թէ քիւրդերը վտարելու եւ թէ գիւղացիները Հիւսէին փաշայի զ օ լ ա մ ն ե ր ո ւ դէմ պաշտպանելու համար։ Խեղճերը Հիւսէին փաշայի դէպի Երզնկա մեկնումը իրենց բողոքի արդիւնք կարծած էին, մինչդեռ չեն գիտեր թէ ուրիշ համիդիէներու գլխաւորներու հետ, Զէքի փաշայի նախագահութեամբ, ո՞վ գիտէ ինչ չա-րիքներ կը դարբնեն։ Ժողովը դեռ վերջացած չէ. հոն կանչուած է նաեւ, խիզզի ալլոց, Շէրիֆ պէյը։ Կ'ըսուի թէ նոր կանոնադրութիւններ պիտի ըլլան համիդիէները բարեկարգելու համար, անշուշտ ի վնաս հայ ազգա-բնակութեան։

5 յուլիս

Արհեստական սովը դեռ վերջացած չէ, թէեւ հունձ-քերը լաւ արդիւնք կը խոստանան։ Ամբողջ նահանգը հաց կ'աղաղակէ։ Կառավարութիւնը իբր թէ հացի սղու-թեան առջեւն առնելու համար՝ ինքը կ'ամբարէ ցո-րենները եւ իր ձեռքով ծախել կու տայ. որով շատեր չեն ուզեր իրենց ունեցածը ծախելու, իսկ շրջակայ նահանգներէն արգիլուած է ցորենի արտածութիւնն, կարծես թէ մէկմէկու օտար եղած ըլլային։ Հացի օխայի գինը 50 փարայէն 100 փարայի բարձրացաւ. հասած օրհնութիւններն կաթիլ մը ջուր են։ Ո՞ւր է այն հիւ-րասէր գիւղացին, որուն տունը հազարաւորներ կը կերակրուէին. այժմ խոտաճարակ կապրին եւ շատերը արդէն իրենց ապագայ ամբողջ հունձքն ծախած են իրենց զաւակներուն պատառ մը հաց հայթայթելու համար։ Վաշխառու քաղաքացին տզրուկի նման կը ծծէ գիւղացիներու առանց այն ալ չորցած, անօթութենէ նուաղած մարմինը։

Սովին հետ ձեռք ձեռքի տուած կառավարութիւնն անողոքելի կերպով հարկեր կը հաւաքէ. հարիւրաւորներ կը փախչին դէպի Ռուսաստան, հոն իրենց ընտանիքի ապրուստը ճարելու յոյսով։ Ո՞ւր ես, «հովիւ» Օրմանեան. ո՞ւր է հարկերու բաշխումը, ճանապարհներու ազա-տութիւնը. ո՞ւր են ինչ. հերիք չէ՞ տակաւին հայ ազգը խաբել։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

IV

„Աստուծոյ ողորմութեամբ և կամօք ժողովրդի“ Լուի Ֆիլիպպ եղաւ Ֆրանսիայի Թագաւոր և խոստացաւ յար-գել սահմանադրական իրաւունքները։ Ոչ մի խոստում սակայն, որքան էլ նա հեղինակաւոր ու անկեղծ լինէր, չէր կարող խաղաղացնել ալեծուփ Ֆրանսիան և մա-նաւանդ նրա միշտաբորբոք մայրաքաղաքը, ուր օրըստօրէ շեշտւում էր դասակարգերի հակամարտութիւնը և ուր արդէն սպառնական գլուխ էր բարձրացրել նոր իդէալներ ու նոր կեանք աւետող՝ ս օ ց ի ա լ ի զ մ ի կարմիր ուրւա-կանը։ Բուն ժողովրդական Թագաւորը մետաֆիզիկական մի երեւոյթ է. նա երբէք չի եղել պատմութեան մէջ, երբէք չի էլ լինի։ Թագաւորները յենւում են միշտ այս կամ այն դասակարգի վրայ, պաշտպան կանգնելով միշտ հզօրներին՝ ընդդէմ թոյլերի։ Նրանք երբեմն աջողում են սին խոստումներով հմայել ժողովրդային ընդհանրութիւնը, բայց և միշտ դաւաճանում են նրա շահերին։

Բուրբոնները յենւում էին գլխաւորապէս ազնուա-կանութեան ու կղերի վրայ, Ֆիլիպպ Օրլէանեան յեն-ւում էր ազատամիտ բուրժուազիայի վրայ։ Բայց քանի որ բուրժուազական ազատամտութիւնը վերջին խօսքը չէր հասարակական էւօլիւցիայի, քանի որ տնտեսական կեանքը, գիտութիւնն ու գրականութիւնը նոր, աւելի թարմ ու արմատական հոսանքներ էին արտադրել, հասկանալի է ուրեմն, որ անտագօնիզմը պիտի կանգուն մնար ժողովրդի ու իշխանի միջև և որ յեղափոխական-հանրապետական պայքարը պիտի յարատեւէր։ Կռիւ էր կուսակցութիւնների, որ և կռիւ էր դասակարգերի։ Հանրապետականները — բանւորներ, համալսարանա-կաններ, ինտէլիգէնցիայի ամբողջ ազատամիտ մասը — երազում էին 1793-ի հանրապետութիւնը։ Միւս կողմից՝ հետզհետէ կազմակերպւում էր բուն ընկերվարական կուսակցութիւնը իր յատուկ կերպարանքով և սկսում էր դեր խաղալ հասարակական-քաղաքական կեանքում։ 1830-ից մինչև 1840 բազմաթիւ խլրտումներ ու ապըս-տամբութիւններ տեղի ունեցան բանւորական աշխար-հում։ Յեղափոխական պրօպագանդը աճում էր, կազ-մակերպւում էին նոր-նոր դաւադիր ընկերութիւններ, որոնց ղեկավարն ու հոգին էր հռչակաւոր Բլանկի։ Լուի Ֆիլիպպի կառավարութիւնը հալածում էր այդ ընկերութիւնները, բռնութեամբ ճնշում հանրապետա-կան ցոյցերը և դրանով իսկ փորում էր իր սեփական գերեզմանը։

Շատ չանցաւ, և Եւրոպան նորից դղրդաց Փարիզի ահեղ որոտումներից։ Յուլիսեան յեղափոխութիւնը կրկնւեց 1848-ի փետրւարին աւելի մեծ ու ահաւոր չափերով։ Հնչւեցին դարձեալ „կորչի՛ Թագաւորը“ աղաղակները, զինւած ժողովուրդը ներս խուժեց Ազ-գային Պատգամաւորական Ժողովը և մէկ հարւածով յեղաշրջեց տիրող քաղաքական ռէժիմը, սահմանելով ռ ա մ կ ա վ ա ր ո ւ թ ի ւ ն։ Յեղափոխութիւնը ուրւա-կանի պէս փչեց ամբողջ եւրոպական ցամաքի վրայից և արքայանիստ մայրաքաղաքները վառեց ապստամբու-թեան հրդեհով։ Վիէննա, Բերլին ոտքի կանգնեցին։ Սիկիլիա, Նապոլի, Միլան, Պրագա, Դրէզդէն եւայլն հե-տեւեցին նրանց օրինակին, և ազատութեան մարտիկների արիւնը հոսեց ամիսներով։ Վիէննայի ժողովուրդը՝ Փա-րիզի անցքերով յափշտակւած՝ սկսեց մի շարք ապըս-տամբութիւններ (մարտ 1848), որոնք ստիպեցին Թա-գաւորին փախուստ տալ ու ստորագրել սահմանադրու-թիւն։ Ապստամբութիւնը պայթեց Սիկիլիա կղզու վրայ և այնտեղից տարածւեց ամբողջ Իտալիայում։ Չեխերը, ունգարացիք նոյնպէս բարձրացան, և շատ չանցած՝ բովանդակ Աւստրիան իր բազմատարր ու բազմալեզու ցեղերով լողում էր արեան գոլորշիների մէջ։ Իտալիայի ազատագրութեան առաջին փորձերում արդէն փայլում են Գարիբալդիի ու Մաձինիի պայծառ դէմքերը։ Ապըս-տամբութիւնը խեղդւեց, իրաւ է. ռէակցիան յաղթա-

նակեց Իտալիայում զրակօնական միջոցներով,—բայց ապստամբների այդ առաջին և հսկայական ճիգը ապարդիւն չանցաւ. նա զարկ տւեց ազգային ինքնաճանաչութեան, որը պիտի տար իր բաղձալի արդիւնքը 12 տարուց յետոյ։

Վէննայի ապստամբութեան հետևեալ օրը (մարտ 18) պայթեց Բերլինը։ Պաղ, խոհուն, ծանրաշարժ գերմանացիք առաջին անգամը նորագոյն պատմութեան մէջ բարրիկադների էին դիմում։ Ի՞նչ էր նրանց պահանջը— նոյնը, ինչ որ ամէն տեղ՝ ապրել 19-րդ դարու կիսում քաղաքացիական մարդավայել կեանքով, ազատ ֆէօդալական կաշկանդումներից։ Սահմանադրութիւն, ազատ մամուլ ու խօսք, ազատ առևտուր ու արդիւնագործութիւն — ահա գերմանական աշխարհի պահանջները 1848-ին։ Միահեծան պետերը ահաբեկուած՝ յետ էին նահանջում ապստամբների առջև և շտապում էին ստորագրել այդ պահանջները։ Ո՞րքան հզօր է յեղափոխութեան աստուածը, և ո՞րքան անողորմ է նա ազատութեան դահիճների դիմաց։ Ահաւասիկ պատմական մի վսեմ, անմոռանալի վայրկեան, երբ եւրօպական վեհաշուք մայրաքաղաքները մին միւսի ետևից անձնատուր են լինում յեղափոխութեանը և երբ ժողովուրդների վեհերոտ հրամանատարները լեղապատառ՝ մի անկիւն են փնտրում պատսպարելու իրենց յանցաւոր գոյութիւնը... Ապստամբները տիրանալով Բերլինին՝ չուզեցին ջնջել միապետութեան գարշելի հաստատութիւնը— այդչափ դեռ չէին հասունացել գերմանացիք, — բայց նրանք ուրիշ կերպ վրէժխնդիր եղան դարաւոր բռնակալութիւնից։ Սահմանադրութիւնը կորզելուց յետոյ՝ նրանք ուզեցին որքան կարելի է նուաստացնել վեհապետի անձը։ Մի օր նրանք բերին ազատութեան նահատակների դիակները դարսեցին արքայական բակում, ապա կատաղի գոռում-գոչումներով դուրս կոչեցին թագաւորին ու թագուհուն և ստիպեցին նրանց գլուխ խոնարհեցնել ի յարգանս մեռածների...

Շարժումը Պրուսսիայում չկղզիացաւ։ Ռամկավարականներն ու կոմունիստները (ընկերվարական) զանազան տեղերում կազմակերպել էին գաղտնի կոմիտէներ։ Մայիսի 11-ին գումարուեց Ֆրանկֆուրտի հռչակաւոր պարլամենտը, որ կազմում էին ամենայայտնի գիտնականներ, ազատամիտ ու արմատական պրոֆէսօրներ, և որ նպատակ ունէր մշակել սահմանադրութիւն բոլոր գերմանական պետութիւնների համար։ Երբ նրա դէմ հալածանքներ սկսուեցին, նա նիւթեց մի շարք արիւնահեղ ապստամբութիւններ Գերմանիայի այլևայլ անկիւններում։ Սաքսոնիայում, Սիլէզիայում, Բադէնում, Վիւրտեմբերգում տարածուեցին ապստամբութեան ալիքները։ Դա մի հոյակապ շարժում էր Գերմանիայի ազատագրութեան ու վերածնութեան։ Դա բուրժուազական յեղափոխութիւնն էր, որը կատարուել էր Ֆրանսիայում 60 տարի առաջ։ Նա ազատեց Գերմանիան ֆէօդալական-համքարական կարգերից և դրեց նրան ազատ զարգացման ճանապարհի վրայ։ Երկրի առևտուրն ու արդիւնաբերութիւնը այնուհետև ահագին թռիչքներ արին և պատրաստեցին քայլ առ քայլ գերմանական միութիւնը, որ և իրագործուեց 1871-ին արեան ու երկաթի քաղաքականութեամբ։

Համալսարանական երիտասարդութիւնը, ինտելիգենցիան առաջապահի դերը խաղացին 1848-ի գերմանական շարժումների մէջ։ Նրանց շարքերում մենք տեսնում ենք դարուս ամենափայլուն դէմքերը՝ Կարլ Մարքս, որ կոչուած էր ի մի ձուլելու համայն աշխարհի բանւոր ընդհանրութիւնը, Կարլ Ֆոխտ, անխոնջ կուռողը և գիտնական-փիլիսոփան, Ֆրիդրիխ Էնգելս, պատանի Լիբկնեխտ, Միխայիլ Բակունին, ռուս յայտնի յեղափոխական, որ հոգին էր Դրէզդէնի ապստամբութեան, ևն ևն։

Փետրուարեան յեղափոխութեան նախընթաց օրն էր, որ Կարլ Մարքս իր հռչակաւոր մանիֆէստով արձակեց աշխարհին շառաչալից կոչը՝ „պրոլետարներ՝ բոլոր երկիրների՝ միացէ՛ք“։ Համաշխարհային մի երևոյթ էր այդ կոչը, քանի որ Մարքսի մանիֆէստը դարձաւ յետագայում միջազգային սօցիալիստ պրոլետարիատի աւետարանը։ Նա անում էր համարձակ մարգարէութիւններ, նա ներշնչում էր վարդագոյն յոյսեր։ Երիտասարդ Մարքսը գուշակում էր 1848-ի բուրժուազական յեղափոխութիւնից յետոյ անմիջապէս սօցիալական յեղափոխութիւնը, որը արմատից պիտի ջնջէր դասակարգերի հակառակութիւնը և պիտի սահմանէր մարդկանց մէջ կոմունիստական հաւասարութիւն։ Մօտիկ ապագան չարդարացրեց այդ վառ յոյսերը, և ընկերվարական մտածողները, որ փոքր առաջ հաւատում էին սօցիալական յեղափոխութեան շուտափոյթ գալստեան և սօցիալիզմի մօտալուտ յաղթանակին, այժմ ընդունում են, որ այնպիսի մի վիթխարի հարց, ինչպէս հասարակութեան արմատական յեղաշրջումն է, պահանջում է տարաբախտաբար երկար, շատ երկար ժամանակի անդուլ աշխատանք...

—

Ամբողջ Ֆրանսիան լուռ ու մունջ ընդունեց Փարիզի դեկրէտը, որ հռչակում էր հանրապետութիւն։ Ընտրուեց — ընդհանուր հաւասար ձայնատուութեամբ — ժամանակաւոր մի կառավարութիւն։ Թւում էր՝ թէ ներքին կռիւներն ու ալեկոծութիւնները գէթ առժամապէս պիտի դադարէին. թւում էր՝ թէ հանրապետական ռէժիմը իր „ազատութեան, հաւասարութեան ու եղբայրութեան“ ծանուցումներով այլևս առիթ չպիտի տար դժգոհութեան ու խռովութիւնների... Սակայն ընդհակառակը՝ կուսակցութիւնները, կարծէք, այնուհետև դարձան աւելի անհաշտ և դասակարգային կռիւը ընդունեց աւելի սուր ու կատաղի կերպարանք։ Ընկերվարական կուսակցութիւնը, որ իր ներկայացուցիչներն ունէր ժամանակաւոր կառավարութեան մէջ (Լուի Բլան, Ալբէր), չէր ուզում բաւականանալ լոկ քաղաքական յեղափոխութեամբ և ձգտում էր սօցիալական յեղափոխութիւն առաջացնել, որը միայն կարող է բարւոքել աշխատաւոր դասակարգի վիճակը։ Առաջին քայլից իսկ սկսուեց բաժանումն ու կռիւը հանրապետական կառավարութեան մէջ, այն ինչ՝ Սօբրիէ, Բլանկի, Բարբէ կարմիր յեղափոխականները միևնոյն պայքարը մղում էին դրսում, շարունակ աճեցնելով գաղտնի ընկերութիւնների թիւը։

1848-ի արիւնոտ անցքերն արձանագրելիս՝ չենք կարող չյիշել „ազգային արհեստանոցների“ (ateliers nationaux) տխուր, ողբերգական պատմութիւնը, որ կը մնայ յաւէտ իբրև անջնջելի փաստ բուրժուազական ապիկարութեան և մի պերճախօս ապացոյց, որ բանւորները միմիայն իրենցից կարող են ակնկալել իրենց

դասակարգային ազատագրութիւնը։ Լուի Բլան խմբագրեց le droit au travail-ի (իրաւունք աշխատելու) դեկրէտը, որի համեմատ՝ „հանրապետական կառավարութիւնը պարտաւորւում էր ապահովել բանւորի դրութիւնը աշխատանքով և աշխատանք ժատակարարել ամէն մի քաղաքացու“։ Անմիջապէս հրահանգւեց շինել ազգային արհեստանոցներ՝ աշխատազուրկ բանւորներին գործ տալու համար։ Դա ամենամեծ զիջումներն էր, որ արեց բուրժուական հանրապետութիւնը բանւորներին։ Բայց հէնց այդտեղից է սկսւում արիւնոտ դրամը։ Ճգնաժամ էր. աշխատանք չկար։ Անգործ ժասսաները մերկ ու քաղցած թափառում էին փողոցներում։ Կառավարութիւնը առերեսս համաձայնեց պարապմունք տալ նրանց, բայց՝ փոխանակ իւրաքանչիւրին ըստ իր ընդունակութիւնների և ժասնագիտութեան աշխատեցնելու, բոլորին էլ ստիպեցին հող փորել ջնջին օրավարձով։ Այդ միջոցին էր, որ գաւառներից սկսւեց մեծ հոսանք դէպի մայրաքաղաք։ Աշխատազուրկ բանւորների թիւը աճեց, բարձրացաւ երկու ամսւայ ընթացքում 6,000-ից մինչև 100,000։ Այն ժամանակ օրավարձը սկսեցին աստիճանաբար պակսեցնել, շատերին նոյնիսկ զրկեցին աշխատանքից, ապա և հրամայւեց արձակել բոլորին ու բռնի յետ քշել դէպի գաւառները։ Բանւորները ըմբոստացան. սկսւեց մի տենդային ագիտացիա։ Սոցիալիստական պարագլուխները հրաւիրեցին նրանց դէպի ապստամբութիւն։ Ընդհարումը անխուսափելի էր։

Պրոլետարիատը՝ զինւած ոտից ցգլուխ՝ բռնեց Փարիզի ամբողջ արևմտեան քաղաքամասը. բարրիկադները բարձրացան... „Խաղաղութի՛ւն“—մռնչաց բուրժուազական ռէակցիան, և գեներալ Կավէնեակը հրաման ստացաւ ջնջել ապստամբներին։ Պայթեց մի զարհուրելի ճակատամարտ, որ յիշատակելի է Պարիզի արհաւիրքների պատմութեան մէջ.—մի կողմից պրոլետարիատը, միւս կողմից՝ ամբողջ բուրժուազական ռէակցիայի բանակը, որ երդւել էր իսպառ ոչնչացնել սոցիալիստական ուրւականը։ Ամրացած Սէնտ-Անտուանի արուարձանում՝ բանւորները կռւեցին յամառ, մոլեգին։ Երեք օրւայ արիւնհեղութիւններից յետոյ զօրքը պաշարեց նրանց։ Եւ... սկսւեց կոտորածը, — ահռելի, մասսային կոտորած, որ յայտնի է պատմութեան մէջ „Յունիսեան ջարդեր“ անունով։ Բանւորները խմբովին ժորթոտւեցին կամ աքսորւեցին, տասնեակ հազարաւոր պրոլետարներ ընկան բարրիկադների տակ „ազատութի՛ւն“ մրմնջալով...

Ծանր, յուսահատեցուցիչ օրեր էին ֆրանսիական սոցիալիզմի համար։ Մի սարսափեցնող հիասթափութիւն տիրեց ընկերվարականներին և բոլոր առաջադէմ տարրերին։ Սոցիալիստական պրոպագանդը մարեց, նրա օրգանները խափանւեցին։ Սոցիալիզմը ընկճւեց և այնուհետև երկար ժամանակ կենդանութեան նշոյլ չէր ցոյց տալիս։ Զարմանալի չէ, որ երեք տարուց յետոյ (2 դեկտ. 1851) կատարւած Լուի Նապոլէոնի (հանրապետութեան նախագահ) պետական հարւածի փորձը պսակւեց աջողութեամբ և արեան հեղեղներով նաճւած փետրարեան հանրապետութիւնը վերստին փոխւեց կայսրութեան։

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

ՇԱՀԸ ՊՕԼԻՍ, ԿԱՄ ՇԻՐ ԽՈՒՐՇԻՏԸ ԵՒ ՄԱՀԻԿԸ.—Հազար տարին անգամ մը օսմանցիները իրենց փատիշահին յօբէլեանը տօնեցին, ան ալ քթերնէն եկաւ։ Ոչ մէկ թագակիր գլուխ ազգային այդ արիւնային հանդէսին մասնակցելու փութկոտութիւնը ունեցաւ։ Համիդ բոլոր թագաւորութիւնը կուտար, եթէ իր յօբէլեանին վեհապետ մը մասնակցէր. բայց իզուր... Ամէնքը իրենց խեցիներուն մէջ քաշւած՝ շատացան մէյմէկ հասարակ ներկայացուցիչ դրկել... խալիֆային համիսլամութեան երազին վրայ պաղ շոգի ածելու համար։ Եթէ երբէք թագաւորներէն մէկնումէկը փորձէր ներկայ ըլլալ այդ արիւնային յօբէլեանին, իսկոյն Պոլսոյ լզան թերթերը պիտի գրէին թէ այսինչ կեսաւուր վեհապետը մեր օգոստափառ սուլթանին հաւատարմութիւն ցուցնելու եկաւ եւ հազրէթի փատիշահին ներկայանալով անոր ձեռքը պագաւ։ Թիւրքերը հիմա աշքկապութեան ելեր են. սուտերը կը բրդեն ասդին անդին եւ խեղճերը ատով կը յուսան՝ թէ աշխարհի բոլոր միսիւլմանները իրենց արիւնքերան փատիշահին շուրջը պիտի հաւաքեն։

Երբ քրիստոնեայ վեհապետները չի հաճեցան Համիդի լուսերեսին ուխտի գնալ եւ իրենց... բախտը փորձել, Երլդըզը ուրիշ հնարքի մը դիմեց իր աստուածային շուքի հմայքը իմացնելու համար։ Օգտւելով պարսից շահին Եւրոպա այցելութենէն, ամէն կեղծաւոր եւ խաբեբայ միջոցներ գործ դրաւ, որպէսզի Մուզաֆֆէր-էդ-դինը Պոլիս բերել տայ, քանի որ Պոլիսը այժմ ջրի ճամբայ եղած է, իսկ ինք դազի համիդը տեղէն չի ջարժիր, վախնալով որ հաւկիթը կը պաղի։

Պարսից վեհապետները, հակառակ իրենց ժողովրդին թունդ մոլեռանդութեան, կը սիրեն երբեմն երբեմն ճամբորդել Եւրոպա, տեսնել քաղաքակրթութեան հրաշալիքները և... նոր վայելումներ ունենալ։ Իրենց հետ կը տանեն անթիւ հետեւորդներ, որոնք կը յիշեցնեն հին „անմահից գունդը“։ Պարսից Շահինշահները, կը տեսնենք, որ տնափակ կենցաղ մը չունին թրքաց սուլթաններուն պէս, որոնք իրենց պալատներուն մէջ թուխս նստած՝ ամէն օր մէյմէկ հաւկիթ կածեն... Միայն թէ շահերու այցելութիւնը Եւրոպա չունենար անմիջական կամ զգալի ազդեցութիւն հետեւանքէ նեստահար պարսիկ ժողովրդին անշարժութեան վրայ։

Նասր-էդ-դին շահը, շահ Ապդիւլ-Ազիմի ժզկիթին մէջ դժբախտ մահ մը ունենալէ առաջ, քանի մը անգամ շափչփած էր Եւրոպան եւ այդ պատճառաւ լուսամիտ ու բարենորոգիչ վեհապետի լրագրական հմբաւը կը վայելէր, թէեւ շատ հեշտ չէ առկայծ ու հալումաշ երկրի մը մէջ կեանքի եղը լեցնել, երբ հոն... յիմար կոյսեր միայն կան։

Կարելի է ըսել թէ մեռնող շահը քաղաքակրթութեան բարիքները գնահատողներէն էր, բայց եթեւի կը պակսէր անոր մէջ կամքի հզօր եւ պինդ ջղեր։ Որմիզդի եւ Արիմանի միջեւ տարուբերող մէն էր։

Անհրաժեշտ է Մեծն Պետրոսի մը կամքը, եթէ ոչ վայրագութիւնը, Ալիի աղանդաւորները խելքի բերելու եւ քայքայումի սարսուռներէն փրկելու համար։

Մուզաֆֆէր-էդ-դին եւս, հօրը պէս, ճամբորդութեան սիրահար կերեւի։ Կը յուսացւի որ նոր շահը գացած երկրներէն բան մը կը տանի հետը իր հպատակներուն անլիխոտ գոյութիւնը անուշցնելու համար։ Չէ կարելի ըսել թէ պարսիկ շահերը անծանական գբօսանքի համար միայն կը թափառին աշխարհէ աշխարհ, շողոքորթութեան ու երեսպաշտութեան առարկայ ըլլալու համար, կամ անոնցմէ են, որոնք ծովը կերթան ու ցամաք կը դառնան։ Մուզաֆֆէր-էդ-դին քաղաքակրթութեան կեանքով հետաքրքրւող մէն է, քաշ որսորդ մը ըլլալէ զատ, եւ գուցէ կրմբռնէ թէ վեհապետի մը կոչումը իր հպատակները բախտաւոր ընելն է, ինչ որ կը քարոզէին նաեւ պարսիկ հին բանաստեղծները։

Կար ժամանակ, երբ արեւելեան թագաւորները, ինչպէս եւ սուլթանները, իրենց պալատի պարտէզի հորիզոնէն դուրս չէին ելլեր եւ չէին գիտեր իրենց երկրին մէջ անցած դարձածը. շրջապատւած պնակալեզներէ, շողոքորթներէ, մութին մէջէն կը կառավարէին իրենց երկիրը, զոր չէին ճանչնար։ Եղան վեհապետներ ալ, աւելի հոգատար իրենց յանձնւած հօտին, ծպտւած՝ ատեն-ատեն դուրս կելլէին, տեղէտեղ ման կուգային եւ իրենց ժողովրդի վիճակը մօտէն կը դիտէին։ Կը հարցուփորձէին առաջին հանդիպող հովիւը կամ գեղացին, որոնց պարզ, միամիտ եւ իմաստուն խօսակցութիւնները կը պատուին յածախ հէքեաթներու մէջ եւ որոնք սովորաբար կեանքի մելամաղձոտ փիլիսոփայութիւն մը կը պարունակեն։

Սակայն այժմ այդ „երանելի“ դարերը անցած են։ Սուլթան Համիդ, կ'ըսեն, պալատին մէջ ամրափակ զբաղում մը

միայն ունի — կարդալ ոճրային եւ էնդրիկներով լի վէպեր ու մշակել եղեռնային մութ ծրագրեր:

Նոր շահը, քաղաքական եւ այլ նպատակով, 5-6 ամիս է կը ճամբորդէր Եւրոպա: Ամէն կողմ իր արեւելեան բուրդ գլխով ու տարազով, Մենթէսքիոյի „բարիզեան հետաքրքրութիւնը" շարժելով, այնպէս որ „Պարսկական Նամականիի" հեղինակին հետ կընանք ըսել՝ „պէտք է խոստովանել որ ճիշտիշտ պարսիկ դէմք ունի":

Բարիզ քաղաքը սիրալիր ընդունելութիւն ըրաւ, ինչպէս եւ Եւրոպայի հայ զաղթականութիւնը: Բարիզի մէջ սպանութեան փորձ մըն ալ եղաւ շահին դէմ, որ եթէ յաջողէր, տոհմային սեւ ճակատագրականութեան խորհրդաւորութիւնը պիտի ստանար:

Ֆրանսական „հին կենսուրախութիւններէն" եւ մեծարանքներէն խիստ գոհ՝ պարսիկ վեհապետը քանի մը տեղեր ալ այցելելէ յետոյ՝ կը պատրաստուէր Ռուսաստանի ճամբով վերադառնալ Պարսկաստան, մանաւանդ որ իր բացակայութեան երկարելովը ներքին խլրտումներ սկսան առաջ գալ:

Սուլթանը ամէն քար գլորցուց որ յաջողի պարսից շահը Պոլիս հրաւիրելու: Շահը տրամադիր չէր իր պատմական եւ կրօնական անհաշտ թշնամիին հետ երեսներեսի գալ, եւ արդէն աւելի հեռատես մտքեր կը նախատեսնէին շահին այդ այցելութեան լեղւանքը: Կարծես շահը ինքն ալ ամաչ կը զգար աշխարհի լեզուն ինկած եւ „Մեծ Մարդասպան" տիտղոսը կրող մարդու մը այցելել: Վերջապէս թերուդէմ երկար բանակցութիւններէ ետք պատրաստուեցաւ ընդունելութեան պրոտոկոլ մը, որով շահը սիրտըմեռ՝ իսլամութեան „գազան" խալիֆային փափաքին գոհացում տուաւ: Սուլթանին պորտը տեղը ինկաւ:

Առաջին անգամն է որ իսլամութեան երկու ոսոխ խալիֆաներ իրարու կը հանդիպին, երբ մահմետական աշխարհի մէջ հոգեւարքի ճարճատիւն կը լսի: Այդ տեսակցութիւնը մոռելացի մը այլաբանական ծեւն ալ ունի:

Շահը անցաւ Պալքաններէն, ուր հասած էր երբեմն պարսից աշխարհակալութեան սուրը, ուր սկիւթացիք, հեգնութեան համար, Դարեհի թռչուն մը, մուկ մը, նետ մը ելն ղրկեցին: Պարսից վեհապետը հովի պէս անցաւ այդ հինին դարերու յիշատակի վայրերէն, ուր մոգերու ատրուշանները Իրանի փառքին կը հետեւէին:

Մուզաֆֆէր-էդ-դին շահը չընդունուեցաւ Պոլսոյ մէջ արքայավայել շքով: Սուլթանը խաբած էր զայն: Շոգեկառքէն շոգենաւ կը դնեն եւ կը տանեն ուղղակի Օրթագիւղ, փայտի կտորներով թալաթօսւած նաւամատոյց մը, ուրկէ տխուր եւ նեղ փողոցներէ կառաշնորդեն Եըլդըզ, ամէն աչքէ հեռու պահելով. մինչդեռ Կիյոմը Տօլմապաղչէի պալատին առջեւ կելլէր սուլթանը համբուրելու համար: Կարծես քաղաքական յանցաւոր մը ըլլար շահը կամ սուլթան Մուրատը, որ գողունի ճամբով կը փախցնեն: Արեւելեան վեհապետները որքա՛ն կը սիրեն պահուըտուք խաղալ իրենց հպատակներուն հետ:

Շահը զգացած է, որ ծուղակը ինկած է: Յայտնի է որ թիւրքերը շահը Պոլիս բերին՝ զայն սուլթանի ստորադասը ցցնելու եւ անոր ճորտը հռչակելու, մէկ խօսքով խայտառակելու համար:

Պոլսոյ թիւրք լրագիրները „չալըմով" մը կը յայտարարէին որ շահը „խալիֆ" անուանած է սուլթանը եւ անոր ձեռքը համբուրած է: Համիդ, ինչպէս կերեւի, հմիսլամութեան հարցը չշոշափելէ զատ, ուզեր է շահը ատելութիւնով զինել հայերուն էմ: Եթէ հաւատանք թռուցիկ լուրերուն, շահը չէ բարեհաճէր ամիսլամութեան արիւնարբու խալիֆային „չէշմ" ըսել: Եթէ Համիդ երբէք չի յաջողեցաւ իր „սեւ կախարդութեան" մէջ, բայց շահին այնպիսի բարոյական հարուած մը տուաւ, իջեցնելով զայն վաւիի մը աստիճանին, որ միսիւլման աշխարհը շահի վրայ կը նայի այժմ իբր սուլթանի հաւատարիմ, հլու ծառայի մը վրայ:

Մուզաֆֆէր-էդ-դին շատ դժգոհ մեկնած է խալիֆայութեան ոստանէն, թէեւ Պոլսոյ հիւծախտաւոր թիւրք թերթերը բոլորովին հակառակը կը հաչեն: Չէ այցելած նոյնիսկ՝ քաղքին գլխաւոր տեղերը, այնքան անպատւած զգացեր է ինքզինք: Ո՛ըսի թէ սուլթանին հետ ճաշկերոյթի մը ատեն, որ երեք քառորդ ժամ տեւեր է, բերանին չեն բացած, լուռ նստած, լուռ բաժնուած են, կոահեցնելով, որ Շիր Խուրշիտը Մահիկին հետ հարսփեսայութիւն չի կրնար ընել: Շահը օր առաջ օձիքը ազատելը կը նայէր Պոլսէն, եւ օր մըն ալ, երբ 3 ժամ կար դեռ շոգեկառքը ելլելու, կանուխ Մագրիգիւղ գնաց եւ հասարակ մարդու մը պէս ոտքի վրայ՝ սպասեց եւրօպական շոգեկառքին, որ պիտի տանէր զինքը եւ իր... դժբախտութիւնը: Շահը աւելի փախաւ քան թէ մեկնեցաւ այդ արիւնային, այնքան անկիրթ աշխարհէն, լաւ հասկնալով, որ սուլթան Համիդ չէ պարսիկ բանաստեղծին այն վարդը, որուն քով մարդ կ'անուշահոտի: Եւ տեղն էր, որ հեգնօրէն ըսէր քէօփէ Համիդին՝ „էտէպ ղզքի՞ ամուխթի":

Պալկանեան երկիրներէն անցնելուն, Սոֆիա, Պէլկրատ աւելի սրտալիր ընդունելութիւն գտած է քան սուլթանի մօտ:

Նորէն Ռուսաստան անցնելուն՝ շահը անշուշտ քաղաքական նոր մկրտութիւն մը պիտի ընդունած ըլլայ: Լուր կայ նաեւ թէ շահը իր հօրը պէս այցելած է Էջմիածինը եւ տեսակցած է հայոց կաթողիկոսին հետ: Գուցէ պարսից շահը ուզած է ատով Համիդի արիւնոռուշտ առաջարկներուն դէմ հաւաստիք մը տալ հայ ազգին՝ թէ ինք միշտ քարի տրամադրութիւններ կը տածէ դէպի հայ ժողովուրդը:

Շահին պտոյտը Եւրոպայի մէջ սպասելի է որ բարոյական եւ հասարակական օգուտներ առաջ բերէ Իրանի մէջ: Գուցէ, Մուզաֆֆէր-էդ-դին շահը ժամանակը եկած սեպէ Ուրմզդի թագաւորութեան Անբիմանի, այսինքն սուլթան Համիդի, թագաւորութեան սահմաններուն վրայ եւ ձգտէ հաստատել Իրանի մեծութիւնը ցլացլուխ վիթխարի սիւններուն վրայ, որոնք կը զարդարեն Պերսեպոլիսի աւերակները, իբր վկաներ Արեւաց աշխարհի հին ու մեծատարած կայսրութեան: Սակայն կը հաւատանք թէ երկու խալիֆաներու տեսակցութիւնը դրական հետեւանք չէ կարող ունենալ բացի այն լուրէն, որ Դուրը ուզեր է Պարսկաստանի մէկ քանի քաղաքներուն մէջ հիւպատոսութիւններ հաստատել... զանոնք անօթի ձգելու համար կամ շատ շատ՝ տեղին միսիւլմաններու մոլեռանդութիւնը վառ պահելու համար հայերուն դէմ:

Մուզզաֆֆէր-էդ-դին – քաջար մը, գուցէ եւ տաներ ան մը ըսէին հին պարսիկները, որ կիշխէ հին Իրանի վրայ — պէտք չէ արհամարէ բուն Իրան ցեղին հպարտութիւնը, որուն մէջ մեծութեան եւ ծաւալող հոգիի մը խմորը կայ: Անոր ծոցէն ելաւ Պապէն, մեծ բարենորոգիչը, որ կախաղանի վրայ այնքան բարձր զգալով ինքզինք, արիական հպարտութիւնով կ'ըսէր. „խուժ ամբոխը ոտքերուս տակ կը սողայ": Թիւրքը չարտադրեր այդ տեսակ բարձրութիւններ:

Նոր շահը փափաքելի է, որ դուրս հանէ երկիրը կղզիացումէն — ոչ անգլիական „հոյակապ կղզիացումը" — եւ բանայ իր սահմանները քաղաքակրթութեան հոսանքներուն առջեւ, հալածէ ճիները, փէրիները, դեւերը եւ տայ նոր վերածնութիւն մը այդ հիանալի, այլ... թուլցած եւ մարմնապաշտ ցեղին ու խլէ զայն բախտի շնորհազրկումէն: Զրուանը, ճիշդ է, խոշոր եւ խոր ակօսներ հերկած է անոր ճակտին վրայ եւ ըրած է զայն Ուրմիոյ լճին պէս անկենդան, բայց կարող է կանգնել, եթէ Իրանի սիրուն մանուկները — որոնք աշխարհիս էն աղուոր եւ խելացի դպրոցականները կը կարծուին — Իրանը խեղդող մթնոլորտէն հեռու պահուին, հեշտութեան ծաղիկը քաղելէ առաջ դուրին քաղաքակրթութեան եւ ժողովրդասիրութեան ճշմարիտ ճամբուն վրայ եւ տան երկրին այն պայծառութիւնը, որ կը պակսի այսօր, աւա՜ղ, մտքով պղտոր եւ աչքերով „բլչած" Պարսկաստանին, որ „անտարբերութեան ազատութեան" մէջ կեանքի եւ իշխանութեան զեղծում մը ի գործ կը դնէ:

Պարսկաստանը կրնայ դեռ եւս քարենորոգումներու ազդու եւ հաստատամիտ քայլով մը կենդանութեան ուղին դուրս ցատկել, եթէ չուզեր Անգլիոյ եւ Ռուսաստանի երկունքին միջեւ տրորուիլ...

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԻՒՐԴ ՅԵՂԱՊԵՏ ՄԸ

Գերմանական արեւելեան միսիոնարութեան բերան Der christliche Orient ամսագրի յունիս-յուլիսի միացեալ թիւին մէջ՝ դոկտոր Լէպսիուս կը նկարագրէ իր ճանապարհորդութիւնը Հայաստանում եւ, իմիջի այլոց, իր մէկ տեսակցութիւնը Ղէրնախի շէյխ-աղայի՝ Սօր Մեհմէտ աղայի հետ, տալով նոյնպէս անոր լուսանկարը: Մէհմէտ աղան, որ կ'իշխէ Միջագէտքի և Վանայ նահանգին միջև տարածուած երկրին վրայ, այդ կողմերու ամենահզօր ցեղապետն է և միակ քիւրդ շէյխը, որ՝ հակառակ կառավարութեան բոլոր ջանքերուն՝ մերժեց „համիտիյէ" գրելը: Շահեկան կը համարինք բերել հոս քանի մը քաղուածքներ:

«Հաղիւ թէ հովիտը ձգած էինք՝ դաշտի մէջէն երկու ձիաւորներ եկան սրարշաւ, ճանապարհը կտրեցին եւ

անոր մէկ դարձուածքին քով մեր առջեւը եկան։ Կեցուցին մեզ եւ մենք կանգ առինք։

«Ո՞ւր կերթան ասոնք»—հարցուց ձիաւորներէն մէկը մեր դպթիյէյին։—«Շատախ»։ «Ովքե՞ր էք դուք»։—«Կառավարութեան պաշտօնեաներ», ասեց մեր մարդը։ «Պաշտօնեաներու ճանապարհը այս չէ, պաշտօնեաները Բիթլիսի եւ Սղերդի վրայով կ'երթան»։—«Էֆէնտիները այս ճամբան ընտրեցին»։ Ձիաւորները խուզարկեցին մեզ։ «Ո՞ւր հանդիպեցաք քէօչէրներուն» (թափառաշրջիկ քրդեր)։ Բացատրութիւն տուինք այս մասին։ Արդարեւ, մեր հաղորդումը թէ համիտիյէները միայն օրուան մը ճանապարհ հեռու վրան զարկած էին՝ չեղեց մեզմէ ուշադրութիւնը երկու ձիաւորներուն, որոնք քրդերէն կը խօսէին իրար հետ։ Մանրամասնօրէն տեղեկացան վրաններու թիւին ու տեղին։ «Որո՞ւ կը պատկանիք», հարցուցինք մենք։—«Մենք Մուհամէտ աղայի մարդիկն ենք»։ Ձիաւորները ցած ձայնով խօսակցեցան իրար հետ։ «Գնացէք ձեր ճամբան, սէլամ ալէյքում»։ Քաղաքավար ողջոյնով մը իրենց ձիերը քշեցին եւ քանի մը ակնթարթ յետոյ անհետացան անտառապատ տարածութեան մէջ։

Յաջորդ առաւօտ, երբ մենք ուղեցանք տեսնուիլ Սօր Մէհմէտ աղայի հետ, աղան ընդունեց մեզ իր ընդունարանին մէջ։ Սենեակին երեք կողմը երկար բազմոցներ փռուած էին։ Մէկ անկիւնը նստած էր աղան, որ ոտքի ելաւ եւ հրաւիրեց զիս միւս անկիւնը տեղ բռնել։

Համիտիյէներու մասին խօսք բացաւ։

Մեզի դիմելով՝ հպարտութեամբ ու արհամարհանքով հարցուց. «Երկրէն անցաք, գիւղեր գտա՞ք». — «Ո՛չ»։ «Ցանքեր ու պարտէզներ գտա՞ք»։ — «Ո՛չ»։ «Մարդեր գտա՞ք»։—«Ո՛չ. երկիրը մարգազուրկ է եւ ամայացած»։ «Գիտէ՞ք ով ըրաւ այս. այս չուն համիտիյէներն էին։ Երեք տարի առաջ էր, ինչպէս գիտէք, որ հայերու արիւնը հոսեցաւ. մարախներու երամի մը պէս եկան հիւսիսէն եւ ամբողջ երկիրը լափեցին։ Եթէ ես պարսպի մը պէս անոնց դէմ չկենայի՝ ամբողջ երկիրը մինչեւ Բաղդադ անապատ պիտի դարձնէին... Բայց ովքե՞ր են այս համիտիյէները, մէջ բերաւ նա։ Եթէ սուլթանին պատիւը չլինէր, ես զանոնք յայդի գիւղերի պէս քշած կը լինէի»։

Յետոյ տեղեկութիւն տուաւ՝ թէ ինչպէս քէօչէրները քրդական ամէնէն արհամարած ցեղն էին առաջ։ Ամէն տարի Մուսթաֆա փաշայի ցեղը իր սահմաններէն անցած էր եւ չէր համարձակած մարդերու կամ հօտերու վրայ յարձակիլ։ Բայց այն օրէն, երբ սուլթանի զինուորները դարձան եւ ամենալաւ հրացաններով զինուեցան, այն օրէն, երբ Մուսթաֆա փաշան հայ գիւղերու կողոպուտովը հարստացած ու ամբողջ երկիրը ամայացուցած էր, անոնք երկրին տէրը լինել կարծած էին։ Սկսած էին նստակեաց քիւրդ ցեղերու հետ կռիւ բռնել եւ չէին քաշուիր նոյնիսկ քիւրդ գիւղեր թալանելէ։ Ես իմ երկրիս մէջ, ըսաւ Մէհմէտ աղան, ունիմ քրիստոնեայ եւ մահմէտական գիւղեր։ Ասոնք բոլորը—հայ, ասորի, եզիդ, արաբ եւ քիւրդ—իմ զաւակներս են, եւ ես անոնց հայրն եմ ու չեմ համբերիր, որ անոնց մէկ մազին անգամ վնաս հասնի»։ Եւ իրողութիւնն էլ այս էր։ Մէհմէտ աղան իր քրիստոնեայ գիւղերը համիտիյէներու յարձակումներուն դէմ պաշտպանեց եւ եզիդի գիւղի մը կողոպուտին պատճառով կռիւ բռնեցաւ Մուսթաֆա փաշային հետ, որովհետեւ իր բողոքները Պոլիս անլսելի մնացին։ Հետզհետէ գործը լրջացաւ ու քիչ մնաց, որ քրդական պատերազմը մը պայթէր։ «Ի վերջոյ գրեցի Պոլիս—այսպէս վերջացուց Մէհմէտ աղան—եթէ այս Մուստաֆա փաշան հանդարտ չկենայ, մենք մինչեւ մահ պիտի կռուինք իրար հետ եւ կամ անոր ցեղը կը մնայ կամ իմ։ Նա այլեւս չպիտի համարձակի իմ երկրէն անցնելու»։ Այսպիսով լուսաբանուեցաւ մեր երէկուան հանդիպումը երկու ձիաւորներուն։ Անոնք աղային սահմանապահներն էին, որոնք կը հսկէին, որպէս զի համիտիյէները իր սահմանները չմտնեն։ Իր 5000 պատերազմիկներով աղան մինչեւ հիմա միշտ յաղթած էր համիտիյէներուն։ Մենք յետոյ ճէզիրէ իմացանք, թէ ինչպէս զինադուլ եղած էր երկու ժահացու թշնամիներու միջեւ։

Ի՞նչ է պատճառը, որ Մէհմէտ աղայի գիւղերը՝ ապահով կ'ապրին, որ այս գիւղացիները երկիրը կը մշակեն ու կը հնձեն, այգիներ ու թզենիներ կը տնկեն ու երջանիկ կեանք մը կը վարեն։— Որովհետեւ «պաշտօնեաներու ճանապարհը այս չէ», որովհետեւ հոս թիւրք էֆէնտիներն ու հարկահանները գործ չունին։ Աղան անձամբ կ'որոշէ իր գիւղերու տուրքերը եւ կառավարութիւնը ֆինիկ մը աւելի կամ պակաս չի առներ»։

* * *

Մեզ հաղորդում են Փարիզից, տեղեակ աղբիւրից, հետեւեալ ուրախալի նորութիւնը. — Նոյեմբերի վերջերից սկսած Փարիզում լոյս կը տեսնի, ֆրանսերէն լեզուով մի նոր լրագիր՝ Pro Armenia անունով, նուիրուած հայոց հարցին և նրա պաշտպանութեանը Եւրոպայում։ Լրագիրը կը հրատարակուի երկու շաբաթը մի անգամ։ Այդ նոր օրգանի յաջողութիւնը ապահովուած կարելի է համարել, քանի որ նրան պիտի մասնակցեն եւրոպական այնպիսի հռչակաւոր հրապարակագիրներ, ինչպէս՝ Ժորժ Կլէմանսօ, Անատոլ Ֆրանս, Ժան Ժորէս, Ֆրանսիս դը Պրէսանսէ, Ուրբէն Գոհիէ և ուրիշներ։ Լրագրի խմբագիրն է Հայոց հասարակութեան ծանօթ Ֆրանսիացի գրող Պիէռ Քիառ։ Մանրամասնութիւնները հետևեալ համարում։

ԹԵՐԹՕՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՓԱՐԻԶԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

(ՆԱՄԱԿ ՓՐԱՆՍԻԱՑԻՑ)

—

Համաշխարհային ցուցահանդէսը, որ բնականաբար պիտի գրաւէր ամէն երկիրներից այցելուներ, յարմար առիթ էր ներկայացրել բազմաթիւ ընկերութիւնների և կազմակերպութիւնների համար համաժողովներ հրաւիրելու Փարիզում։ Հաշիւը պարզ էր, ուստի և յաջողութիւնը, ամենամեծ մասամբ, կատարեալ եղաւ։ Գիտութիւն իր բազմաթիւ ճիւղերով, արհեստներ, տեխնիկա, հաղորդակցութեան միջոցներ, մամուլ, բարեգործութիւն, դպրոց և հասարակական միջազգային բազմատեսակ հիմնարկութիւններ՝ յուլիս ամսից սկսած մինչև հոկտեմբերի կէսը՝ ցուցահանդէսի դահլիճներում կամ Փարիզի այս կամ այն մասերում՝ ունեցան իրենց բազմամարդ համագումարները։

Մի առանձին տպաւորութիւն էին գործում երկրագնդի զանազան ծայրերից, զանազան ազգութիւնների ներկայացուցիչներից բաղկացած այդ ժողովները։ Որքան և յուռեսես լինի մարդ, չէր կարելի այդ ժողովներում չնկատել, թէ որքան առաջադիմում է տարէցտարի մարդկային ընդհանուր համերաշխութեան գաղափարը և աճում, զօրեղանում է „մարդու" կուլտը ընդհանրապէս՝ ընդդէմ շովինիստական նեղ հակումների։ Ճապոնացին գերմանացու հետ, Արգենտինեան հանրապետութեան քաղաքացին Ֆրանսիացու հետ, Նորվէգացին Աֆրիկայի արաբի հետ, Ամերիկայի եանկին բուլղարացու հետ, իտալացին հայի հետ, անգլիացին ռուսի կամ իռլանդացու հետ — բոլորը այդ համաժողովներում իրար հասկանում, իրար ծափահարում, իրար մօտենում

և մի բոպէում այցետոմսերը փոխանակելով՝ բարեկանում են ցմահ։ Համամարդկային ընդհանուր պէտքերի ներկայացուցիչներ են դոքա, որոնք՝ թէև զանազան միջավայրերի ծնունդ, բայց գիտութեան և գաղափարի, արդարութեան և քաղաքակրթութեան միևնոյն պահանջների ազդեցութեան ներքոյ, հետաքրքրւում են այսօր միևնոյն հարցերով, տանջւում են միևնոյն ցաւերով։ Եւ երբ մի բոպէ երևակայում էք, թէ հետզհետէ որքան աննշան են դառնում ազգերին և պետութիւններին իրարից բաժանող շահերը այն մեծաքանակ շահերի դիմաց, որոնք ընդհանուր են դրանց համար, դուք լցւում էք ամենաջերմ հաւատով դէպի մարդկութեան ապագան։ Քաղաքակրթութեան վիթխարի նուաճումները մեր օրերում արդէն յետ են մղում անցեալ և ժամանակակից պատմական կեանքի գլխաւոր պայմաններից մէկը — փոխադարձ մրցման սկզբունքը անհատների ու ազգերի մէջ, և դուք պարզ նկատում էք՝ թէ ինչպէս խուլ, տգէտ, կենդանական բնազդներով և անշարժ տրադիցիաներով ապրող իներտ ժողովուրդների ու նրանց վայել կառավարութիւնների կողքին՝ աճում է գիտակից հասարակական մի հոսանք, որը ժամանակի ընթացքում՝ մի կողմից բարձրացնելով ամբոխը և միւս կողմից ուղղութիւն տալով կառավարութիւններին, պիտի իրականացնէ վերջապէս մարդկային համերաշխութեան, ընդհանուր մարդկային հայրենիքի գաղափարը։ „Եւրոպական Միացեալ Նահանգներ“, „Եւրոպական Պետութիւնների Դաշնակցութիւն“, վերջապէս „Համաշխարհային Հանրապետութիւն“ — սրանք այժմ իդէալներ են, որոնք ոգևորում են զուտ սոցիալիստական կուսակցութիւններից դուրս՝ նաև բազմաթիւ ուրիշ հիմնարկութիւններ և որոնք ունեն արդէն իրենց գրականութիւնն ու պարբերական հրատարակութիւնները։ Համաշխարհային հանրապետութեան քաղաքացի — ահա ապագայ մարդու անունը, ուր և ապրում, ինչ ազգութեան և պատկանում լինի նա։

Սակայն ո՞րչափ դառն է այդ հմայիչ հեռանկարի առջև այն իրականութիւնը, որի մէջ դեռ ևս ապրում է մարդկութիւնը։ Բիոլոգիական անհաշտ, սոսկալի կռիւ և վաշխառուների ու փոքրաթիւ աւազակապետների բացարձակ իշխանութիւն մեծաքանակ ժողովուրդների վրայ — ահա այդ իրականութիւնը։ Եւ ոչ ոքի համար գուցէ այնքան ակներև չէ այդ հակասութիւնը, որքան ներկայ օրերում ապրող մի հայ-մարդու համար։ Ինչպէ՞ս. տիեզերական հաւասարութեան և եղբայրութեան բուռն պահանջ ու միաժամանակ 300 հազար մարդկային արարածների ջարդ թուրք ժողովրդի աչքի առաջ, նրա հարազատ զաւակների ձեռքով և նրա ապշութեան վրայ յենւած մի մարդ-անասունի հրամանով.—որչա՞փ հակառակ պատկերներ...

„Բայց չէ։ Մենք այսօր Տաճկաստանումը չենք, այլ Փարիզում. մենք այսօր Արևելքի տիպական աշխարհումը չենք, այլ առաջադիմող Արևմուտքում, ուր՝ ի միջի այլևայլ գիշատիչների՝ ժողովւած են նաև համաշխարհային ինտելիգենցիայի ներկայացուցիչները և ուր անշուշտ կը լինեն մեզ լսող-հասկացողներ“ — խորհում ենք մեր մէջ մի քանի հայեր և նետւում մի քանի համաժողովներ։

ՍՈՑԻԱԼԻՍՏ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Մեպտեմբերի 18-ին բացւեց սոցիալիստ ուսանողների միջազգային համաժողովը, որին՝ ուսանողների կողմից եղած հրաւէրի համաձայն, հերթով նախագահում էին Էնրիկո Ֆէրրի, Ժօրէս, Վանդերվելդ։ Այդ ժողովներից մէկում մի ուսանողի կողմից առաջարկութիւն եղաւ համաժողովին՝ համակրութիւն յայտնել տաճկական լծի տակ դեգերող մակեդոնացի, հայ և ուրիշ ժողովուրդների հասցէին։

— „Կորչի սուլթանը“, „կորչի Կարմիր գազանը“, միաբերան աղաղակներով և անվերջ ծափահարութիւններով ընդունեց առաջարկը՝ զանազան ազգութիւնների պատկանող և Եւրոպայի զանազան համալսարաններից խմբւած երիտասարդութիւնից։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ

Ցուցահանդէսի մէջ՝ գեղարուեստների շինութեան ներքին յարկում՝ իմիջի այլոց մի լսարան է յատկացւած ցուցահանդէսի այցելուներին ամէն լեզուներով դասախօսութիւններ կարդալու համար։ Վաճառականութեան և արդիւնաբերութեան մինիստրի հովանաւորութեան տակ կազմւել են զանազան ազգերի ներկայացուցիչներից առանձին մարմիններ, որոնք և կազմակերպում էին այդ դասախօսութիւնները՝ աշխատելով շօշափել ամենաբազմակողմանի նիւթեր։ Ահա այդ դպրոցի ռուսաց բաժնում, որը ղեկավարում էր յայտնի սոցիոլոգ պրոֆէսոր Մաքսիմ Կովալէվսկին, սեպտեմբերի 19-ին՝ պ. Ֆ. Միքայէլեան ռուսերէն լեզուով կարդաց մի դասախօսութիւն՝ „Հայկական հարցը Թիւրքիայում“։ Այդ դասախօսութիւնը հետաքրքիր եղաւ մանաւանդ նրանով, որ առիթ տւեց հայերի մասին խօսալու նաև պրոֆէսոր Կովալէվսկուն։

Դասախօսը՝ ծրագիր ունենալով — հերքել այն բոլոր անհեթեթ կարծիքները, որոնք Ռուսաստանում եւ Եւրոպայում երբեմն արտայայտւում են հայկական հարցի մասին ու պարզել խնդրի իսկական բնոյթը և այժմեան դրութիւնը—վերջացրեց իր դասախօսութիւնը հետևեալ կերպով.

„Տիկիններ և պարոններ. Եթէ իմ ասածներով ես կարողացայ թէկուզ մի ամենաընդհանուր գաղափար տալ ձեզ հայկական հարցի մասին, ես կիջնեմ այս ամբիոնից միանգամայն գոհ սրտով։ Այդ դէպքում ես յոյս կունենամ, որ ամէն մէկդ ձեր շրջաններում, երբ այդ կը պահանջւի, համարձակ կերպով կը բացատրէք՝ թէ ի՞նչպէս ստեղծւեց հայոց հարցը, ինչո՞ւ համար են հայերը կռւում, ինչո՞ւ համար են նրանց մորթում և ո՞վ է մեղսակիցը Կարմիր սուլթանի՝ իրագործելու նրա հրէշաւոր ծրագիրը — պատել ամբողջ Հայաստանը մահւան, անվերջ տանջանքների և ընդհանուր ամայացման սև քօղով։ Ես յոյս կունենամ նոյնպէս, որ եթէ այդքան ծանր պայմաններում, անհաւասար կռւի մէջ՝ հայերին վիճակւի մեռնել, դուք ձեզ պարտաւոր կըզգաք բարձրաձայն պատմելու ամէնքին՝ թէ ինչու մեռան հայերը“...

Բուռն ծափահարութիւններ։

Վերջին խօսքերն էին, որ առիթ տւին պրոֆէսոր Կովալէվսկուն պ. Միքայէլեանից յետոյ ամբիոն բարձրանալ։ Յայտնելով իր շնորհակալութիւնը դասախօսին՝ յարգելի պրոֆէսորը մի տաղանդաւոր ճառի մէջ արծարծեց այն միտքը, որ հայերի թէ անցեալը և թէ ներկան ընդունակ են ներշնչելու ջերմ հաւատ

նաև դէպի նրա ապագան։ „Հայերը չեն մեռնի և չպիտի մեռնեն—ահա այն գիտակցութիւնը, որ հետզհետէ աւելի լայն նաճումներ է անում թէ ռուսաց ինտէլիգէնտ շրջաններում և թէ եւրոպական հասարակական կարծիքի մէջ։ Եւ այս իր միտքը ապացուցանելու համար՝ նա մտաւ հայոց պատմութեան մէջ, յիշեց այն բոլոր քաղաքակրթական ծառայութիւնները, որոնք հայերը մատուցել են մարդկութեան և մանաւանդ Արևելքին, պատմեց իր անձնական դիտողութիւնները ժամանակակից հայոց կեանքի մասին, մատնացոյց արեց որոշ հասարակական հոսանքներ, որոնք կապւում են յօգուտ հայերի, և վերջացնելով իր խօսքը, դարձեալ շեշտեց, որ՝ „նոյնիսկ այժմեան ծանր պայմաններում՝ հայ ժողովուրդը հեռու պէտք է պահի իրեն ոևէ յուսահատութիւնից“...

Ոգևորած և բուռն ծափահարութիւններ։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Սեպտեմբերի 23-ն է։ „Վագրամի սրահում“, որ մի վիթխարի շինութիւն է՝ բաղկացած երկու խոշոր դահլիճներից՝ իւրաքանչիւրը իր բեմով, առաւօտեան ժամը 9½-ին հաւաքւում են միջազգային սօցիալիստական համաժողովի անդամները։ Երկրագնդի բոլոր ծայրերից եկած լիազօր պատգամաւորներ, որոնք տեղ-տեղ ներկայացնում են միլիոնաւոր ձայնատուներից բաղկացած սօցիալիստական կանոնաւոր կազմակերպութիւններ, ժողովւում են այդտեղ կուսակցական ընդհանուր խնդիրները քննելու և այդ խնդիրների շրջանում մի որոշ ընթացք նախագծելու ամբողջ աշխարհի սօցիալիստ կազմակերպութիւնների համար մինչև հետևեալ համագումարը, որ տեղի պիտի ունենայ 3 տարուց յետոյ՝ Ամստերդամում։ Պատգամաւորների ընդհանուր թիւը, ուր ֆրանսիացիք բնականաբար կազմում են մեծամասնութիւն, երկու հազար հինգ հարիւրից աւելի է։ Ժողովին մասնակցում են՝ բացի Ֆրանսիայից՝ Գերմանիա, Անգլիա, Աւստրիա, Իտալիա, Բելգիա, Ռուսաստան, Լեհաստան, Բոհեմիա, Զվիցերիա, Դանեմարկ, Հոլանդիա, Իսպանիա, Շվեցիա, Ամերիկայի Միացեալ Նահանգները, Արգենտինա, Բուլղարիա, Իռլանդիա, Նորվեգիա, Պորթուգալիա։ Աւստրալիա, Ճապոնիա և ուրիշներ ուղարկել են իրենց ձայները։ Պատգամաւորների թիւումն են յայտնի սօցիալիստ հրապարակախօսներ, գիտնականներ, պարլամենտական գործիչներ և կազմակերպութիւնների ղեկավարներ։ Այդտեղ են՝ Գէդ, Վայեան, Լաֆարգ, Վիվիանի, Ալման, Ժորէս, Ժերօ-Բիշար, Զէմբա, Գամելինա, Բրիան (Ֆրանսիա), Կաուցկի, Զինգէր, Դաւիդ, Աուէր, Փոլմար, Կլարա Ցետկին (Գերմանիա), Էնրիկօ Ֆերրի, Անդրէա Կոստա (Իտալիա), Վանդերվելդ, Ֆիւռնէմոն (Բէլգիա), Վան Կոլ (Հոլանդիա), Ագլէր, Սկառէ (Աւստրիա), Պէտ Կիւռան, Քիլչ, Հէյդմանն (Անգլիա), Պլէխանով (Ռուսաստան), Ռոզա Լիւքսէնբուրգ (Լեհաստան), Լիւսիէն Սանիալ (Ամերիկա) և էն էն։ Բացակայ են ամենայայտնի աստղերից Բեբէլ (հիւանդութեան պատճառով) և Բերնշտայն։ Ժողովով հետաքրքրւում են նաև մամուլի բազմաթիւ ներկայացուցիչներ ու դահլիճի շուրջը պտտող երկայն գալերէյում՝ ունկնդիրների ահագին բազմութիւն։

Մենք ընդունել ենք ժողովների դահլիճը առանձին տոմսակներով, իբր մամուլի ներկայացուցիչներ՝ „Դրօշակի“ խմբագրութիւնից ստացած արտօնութիւնով։ Ժողովի օրակարգի 4-րդ կէտը վերաբերում է „Միջազգային խաղաղութեան“, և մենք՝ տանջւած, կոտրւող հայ ժողովրդի զաւակներս՝ իբրև բողոքողներ սուլթանական ռէժիմի և այդ ռէժիմի յարատևութեան մեղսակից բուրժուազական Եւրոպայի դէմ, վճռում ենք մեր խնդիրը ևս համաժողովի ուշադրութեանը առաջարկել։ Չէ՞ որ դա „հայկական հարց“ անունով յայտնի այն խնդիրն է, որ հէնց մի քանի տարի առաջ հարիւր հազարաւոր զոհերի անմեղ արիւնով խանգարեց խաղաղութիւնը Հայաստանում։ Չէ՞ որ դա այն խնդիրն է, որ այսուհետև ևս մշտական սպառնալիքների աղբիւր պէտք է լինի խաղաղութեան մեծ գործի համար։ Այս նպատակով դիմում ենք համաժողովի բիւրօին։ Մեզ բացատրում են, որ ծրագրի իւրաքանչիւր կէտի համար բոլոր ազգութիւնների ներկայացուցիչներից ընտրւած առանձին մասնաժողովների գործն է՝ քննել նաև այժմէութիւն ունեցող նոր առաջարկներ և համաժողովին ներկայացնել։ Հարցնում ենք մասնաժողովի նախագահի անունը։ Դա Վայիանն է, արդէն սպիտակահեր, բայց հոգով դեռ երիտասարդ Վայիանը, որը սօցիալիստական գաղափարին մատուցած իր ծառայութիւնների հետ, յայտնի է նաև իբրև 1870 թւականի Կոմմունայի հերոսներից մէկը։ Վայիանը՝ ուրախութեամբ յանձն առնելով մասնաժողովի առաջ դնել մեր խնդիրը, հաղորդում է մեզ նաև՝ թէ երբ է լինելու 4-րդ մասնաժողովի նիստը, և հրաւիրում է մեզ անձամբ ներկայ լինել այդ նիստին ու պաշտպանել մեր առաջարկը։

Սեպտեմբերի 26-ն է։ Ճաշից յետոյ մենք ներկայանում ենք 4-րդ մասնաժողովի նիստին, որը, ինչպէս և միւս մասնաժողովները, պարապում է սրահի երկրորդ դահլիճում և որը գումարւած է արդէն առաւօտեան 9 ժամից։ Ժամը 4-ին մասնաժողովը վերջացնում է իր քննելի խնդիրները, և նախագահ Վայիան առաջարկում է կարծիք յայտնել հայկական կոտորածների, հայկական հարցի մասին։ Մասնաժողովի անդամները ընդհանուր կերպով փոխանակում են իրենց կարծիքները և ապա խօսք են տալիս մեզ, որպէսզի հասկանան այն կօնկրէտ առաջարկը, որ մենք կուզենայինք անել ժողովին։ Խօսում է մեր ընկեր Վարդանեանը։ Մասնաժողովը՝ վճռելով օրակարգի մէջ մտցնել հայկական հարցը, միացնում է դրան նաև իր բողոքը լեհացիների, ֆինների և բօերների վերաբերմամբ գործադրւող ճնշումների դէմ։ Անմիջապէս խմբագրւում են ընդունւած վճիռները և համաժողովի մէջ ևս խօսելու իրաւունք են վերապահում մեր ներկայացուցչին, եթէ կարիք լինի։

Համաժողովը այդ օրը ամբողջապէս զբաղւած է այն ամենատաք խնդրով, որ բոլոր ժամանակ յուզում էր ժողովականներին — այն է 9-րդ, կամ, ինչպէս ասում էին — „մինիստրական“ խնդրով (Միլլերանի առիթով)։

Հետևեալ օրը ճաշից յետոյ միայն ժողովը կարողացաւ անցնել միւս հերթական հարցերին։ Նախագահում է Վան Կոլ։ Ժամը 2-ից ծեծւում են գաղութային և զինւորականութեան խնդիրները։ Ահա վերջապէս ժամը 4-ն է։ Նախագահը սաստիկ շտապում է, որովհետև այսօր վերջին օրն է և 2-3 ժամից յետոյ պէտք է փակւի ժողովը, այն ինչ դեռ սեղանի վրայ են ծովային աշխատանքների կազմակերպութեան, ընդհանուր գործադուլի, ընդհանուր քուէարկութեան և ուրիշ

լուրջ խնդիրները։ Ճնշած ազգերի վերաբերմամբ ընդունված առաջարկների մասին նա խօսք չէ տալիս ոչոքի և ինքը կարդում է միայն մասնաժողովի բանաձևները։ Խնդիրը այնքան պարզ է, համայն աշխարհում բոլոր հալածուողների վիճակը այնքան մօտ է սոցիալիստական կուսակցութեան սրտին, որ ժողովը հաւանութիւն է տալիս նախագահի ընթացքին և բուռն, համերաշխ ծափահարութիւններով ընդունում ու վաւերացնում է մասնաժողովի վճիռները։ Ահա հայերի վերաբերմամբ ընդունված առաջարկը.

„Փարիզի սոցիալիստական միջազգային համաժողովը, վերսին շեշտելով եղբայրական համակրութեան զգացմունքները, որոնք պիտի միացնեն բոլոր ժողովուրդներին, զայրոյթով բողոքում է Հայաստանում կատարված բռնաբարութիւնների, խժդժութիւնների ու ջարդերի դէմ, եւ մատնացոյց անելով երկու աշխարհների բանուորներին զանազան կապիտալիստ պետութիւնների ոճրագործ մեղսակցութիւնը, — հրաւիրում է պարլամենտական սոցիալիստ խմբերին ամէն մի դէպքում միջամտել յօգուտ սնարդարար հարստահարված հայ ժողովրդի, որին կօնգրէսը ուղղում է իր ջերմ ու սերտ համերաշխութեան հաւատիքը“։

ՍՕՑԻԱԼԻՍՏ ՄԱՄՈՒԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Հոկտեմբերի 1-ին ցուցահանդէսի մէջ մամուլին յատկացրած առանձին դահլիճում բացուեց սոցիալիստական մամուլի առաջին համաժողովը։ Ժողովականների մեծ մասը բաղկացած է նախորդ համաժողովին մասնակցող սոցիալիստ գրողներից։ Ժողովը բաց է անում սոցիալիստ բապարակախօսների սինդիկայի ընդհանուր քարտուղար Վ. Ժակլեարը, որ թէև արդէն ծեր, բայց իր պատանեկական աշխոյժով, զգացմունքների թարմութեամբ և գաղափարական հոգով՝ հմայում է հանդիսականներին։

„Դրօշակի“ խմբագրութիւնը պաշտօնապէս հրաւիրուած է մասնակցելու այս համաժողովին։

Ժողովի օրակարգը վաղուց արդէն պատրաստ է։

Նրա 5-րդ կէտը, ուր խօսւում է սոցիալիստ մամուլի դերի մասին ընդհանուր խաղաղութեան և արտաքին քաղաքականութեան խնդիրներում, ազատ ասպարէզ է բաց անում նաև հայկական դատի համար։ Այդ մասին վաղօրոք մենք արդէն յայտնել ենք համաժողովը կազմակերպող կարգադրիչ մասնաժողովին, որը ընդունել է նաև մի գրաւոր զեկուցում Տաճկաստանի մասին Aurore լրագրի աշխատակից և մեր բարեկամ Պիէռ Քիառից։

Համաժողովի երկրորդ և վերջին օրն էր, երբ հերթը հասաւ օրակարգի 5-րդ հարցին։ Այդ օրը ժողովին նախագահում է Անդրէա Կոստա, իտալական յայտնի սոցիալիստ և պարլամենտական գործիչը։ Պ. Քիառի բացակայութեան պատճառով նրա զեկուցումը ներկայացնում է ժողովին պ. Ժակլեարը և ժողովը ծափահարութիւններով ընդունում է Պ. Քիառի առաջարկները։

Ահա դրանք.

1. „Համաժողովը հրաւէր է կարդում միջազգային սոցիալիստական մամուլին հրապարակ հանել ամենալայն ծաւալով այն սարսափելի կոտորածները, որոնք կազմակերպված էին սուլթան Համիդի ձեռքով՝ հայ ժողովուրդը ջնջելու համար. հրապարակ հանել ընդհանրապէս եւ այն եղեռնագործութիւնները, որ այս միապետը կատարել է իր պետութեան մէջ գտնուող զանազան ազգութիւնների դէմ աջակից ունենալով բուրժուա կառավարութիւնների հաւանութիւնը։

2. Սոցիալիստական մամուլը կ՚աշխատի առաջ բերել մեծ պետութիւնների միջամտութիւնը, որը բացառապէս ուղղված լինի սուլթանի դէմ, որպէսզի Տաճկաստանում հաստատի մի տանելի ռէժիմ օսմանեան բոլոր քաղաքացիների համար՝ առանց խտրութեան ցեղի, ազգութեան եւ կրօնի“։

Պ. Քիառի այս առաջարկները, որքան և հավակրելի լինէին ընդհանրապէս, բայց կարծես տաճկական ընդհանուր բարենորոգումների անուան տակ վարագուրում էին զուտ „հայկական հարցը“ — այն հարցը, որ սրբագործված է այսօր այնքան արիւնով և յենւում է միջազգային իրաւունքի վրայ։ Հարկաւոր էր կրկին շեշտել զուտ հայկական խնդիրը, և ահա խօսք է խնդրում մեր ընկեր Վարդանեանը՝ ու արտասանում.

„Քաղաքացիներ. „Հայ Յեղափոխական Դաշնակցութեան“ օրգան „Դրօշակի“ խմբագրութեան կողմից պատիւ ունիմ ողջունել սոցիալիստական մամուլի առաջին միջազգային համագումարը։ Իբրև մէկ անդամ այն կազմակերպութեան, որ տասը տարուց ի վեր կռիւ է մղում ասիական ամենապժգալի բռնապետութեան դէմ, ես այս ամբիոնն եմ բարձրանում ոչ թէ հայ ժողովրդի տառապանքները նկարագրելու կամ նրա դատը փաստաբանելու. մեր վիճակը իր անօրինակ ողբերգական թշուառութեամբ ձեզ ծանօթ է արդէն։ Ես գալիս եմ ձեր առջև բարձրաձայն յայտարարելու, որ հայկական կռիւ յարատևումը մշտնջենական վտանգ է միջազգային խաղաղութեան համար, որովհետև այդ կռիւը պէտք է շարունակուի՝ հակառակ պետութիւնների ջանքերին՝ պահպանելու statu quo, Օսմանեան կայսրութեան մէջ։ Ահա թէ ինչու սոցիալիստական մամուլի միջազգային համաժողովը, իր ձեռքն առնելով հայկական դատի պաշտպանութիւնը, ոչ միայն կը վարի համաձայն արդարութեան ու համաշխարհային միաբանութեան, այլ և միանգամայն կը նպաստէ գործնական մի խնդրի լուծման, — նա կը նպաստէ Խաղաղութեան Գործին։

„Ամենքդ էլ գիտէք, քաղաքացիներ, որ մի քանի շաբաթ առաջ Պօլսոյ Մեծ Մարգասպանը իր գահակալութեան 25-ամեակն էր տօնում, որ ցատագովումն էր իր սպանութիւնների. գիտէք և այն, որ այդ հանդիսաւոր տօնախմբութեանը Եւրոպայի գահակալները ևս աճապարեցին մասնակից լինել։ Մեր դահիճների այդ սրտաշարժ համերաշխութեանը պէտք չէ՞ արդեօք ընդդիմադրել նրանց զոհերի համերաշխութիւնը... (*ծափահարութիւններ*)։

„Որքա՜ն ուրախացանք մենք, երբ միջազգային սոցիալիստական համաժողովը իր վերջին նիստում պարտք համարեց իր ջերմ, սրտագին համակրանքը յայտնել հայ ժողովրդին, պարտաւորեցնելով միաժամանակ պարլամենտների սոցիալիստ կուսակցութիւններին՝ միջամտել ամէն առիթով յօգուտ հայկական հարցի։ Ուրախ ենք, որ ներկայ համաժողովը ևս ընդունեց՝ համարեա նմանօրինակ մի որոշում։ Այո, քաղաքացիներ. սոցիալիստական մեծ կուսակցութեան անհրաժեշտ պարտականութիւններից մինն է՝ ընդարձակ և անդադրում պրոպագանդ մղել ի նպաստ հայերի՝ հանդէպ այն հսկայական ողբերգութեան, որ խաղացւում է Հայաստանում։ Ասացէ՛ք ամէն տեղ,

ձեր ժողովներում և ամբողջ աշխարհի սոցիալիստական մամուլի մէջ, որ կայ մի ժողովուրդ մոտ Արևելքում, երբեմն խրախուսած այժմեան Եւրոպայից, ապա վերստին մատնուած մի մարդակեր հրէշի անգթութեանը։ Պատմեցէք ամէն տեղ այդ հրէշի ոճիրները, որոնք գերազանցում են Նոյնիսկ Լանկթամուրների ու Չինգիսխանների սխրագործութիւններից, և արձագանք տալով մարտնչող հայ երիտասարդութեան ձայնին, թոյլ մի տաք, որ ժամանակակից գիշատիչների ձեռքով բնաջինջ լինի ազատութեան ու քաղաքակրթութեան ձգտող մի հին ժողովուրդ — հայ ժողովուրդը“...

Բուռն ծափահարութիւններ...

ՄԱՐԴԿԱՅՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Այս Համաժողովը, որի նիստերը տեղի էին ունենում „Գիտնականների ընկերութեան“ հիւրանոցի դահլիճում (Սեռպանտ փողոց), ամենաերկարատև համագումարներից մէկը եղաւ։ Նա տևեց սեպտեմբերի 23-ից մինչև հոկտեմբերի 5-ը՝ շօշափելով բազմաթիւ խնդիրներ կանանց հարցի, հասարակական տնտեսութեան, առողջապահութեան, բարոյականութեան, հրապարակախօսութեան, կրթութեան և այլն ճիւղերից։ Ժողովներին նախագահում էր կոմս Դը-Ֆոժեր, փոխ-հիւպատոս, „Դիւանագիտական Նամակներ“ հանդէսի խմբագիրը։

Ինկատի ունենալով այն մարդասիրական նպատակները, որոնց անունով ժողովված էր այդ համագումարը, մեր հայրենակից պ. Առաքելեան, իբրև ժողովի անդամ, արտօնութիւն ստացաւ համաժողովի բիւրօյից՝ մի զեկուցում անել նաև տաճկահայերի դրութեան մասին։

Հոկտեմբերի 4-ին պ. Առաքելեան կարդաց իր զեկուցումը՝ „Հայերի վիճակը Թիւրքիայում“ վերնագրով։ Ատենաբանը՝ համառօտ կերպով ծանօթացնելով համաժողովի անդամներին հայ ազգի և նրա պատմութեան հետ, անցաւ նկարագրելու այն սարսափելի վիճակը, որի մէջ այդ ազգի մեծագոյն մասը գտնւում է Թիւրքիայում։ Նա յայտնեց, որ Թիւրքիայի ներկայ սուլթանը, կամենալով վերջ տալ հայոց հարցին և արգելել պետութիւններին միջամտելու Թիւրքիայի գործերի մէջ հայկական հարցի առիթով, յղացել է մի դժոխային միտք — կոտորել, ջնջել ամբողջ հայ տարրը, մտածելով, որ երբ այլևս հայ չմնայ, հայոց հարց ևս չի լինի։ Իր այդ դժոխային ծրագիրը սուլթանը գործադրում է ամենայն աջողութեամբ 1894-ից սկսած, կազմակերպելով նախ ընդհանուր կոտորածներ և այժմ, շարունակաբար, մասնակի կոտորածներ։ Իբրև ապացոյց, ատենաբանը կարդաց քաղուածներ զանազան լրագիրներից վերջերս Սասունում, Սպաղանք գիւղում, կատարուած կոտորածների մասին։ Ատենաբանը կոչ արեց եւրոպական հասարակութեան խղճմտանքին և հրաւիրեց համաժողովի անդամներին ու մարդկութեան բոլոր բարեկամներին ամէն միջոց գործ դնել արգելելու այնպիսի մի սարսափելի ոճիր, ինչպիսին է մի ամբողջ խաղաղ, աշխատասէր և քրիստոնեայ ժողովրդի բնաջնջումը կոտորածի միջոցով, մի արիւնռուշտ գազանի ձեռքով։

Համաժողովը՝ վարձատրելով ատենաբանին երկար ծափահարութիւններով, միաձայն քուէարկեց հետևեալ որոշումը.

„Մարդկայնութեան համաժողովը, նկատելով՝

1. Որ հայերը Տաճկաստանի մէջ չեն դադարում հալածուելուց եւ ենթակայ են բարբարոսութիւնների ու անգթութիւնների.

2. Որ դժբախտ հայերը չեն դադարում մորթուելուց, կախուելուց եւ այրուելուց, —

Նշանակում ու դատապարտում է այս բարբարոսութիւններն ու վայրագութիւնները եւ ցանկութիւն է յայտնում, որ բոլոր այն մարդիկ, որոնք մարդկայնութեան գիտակցութիւն ունեն, գործեն մարդկայնութեան դէմ կատարուող այս ոճիրներին վերջ տալու համար“։

Մարդկայնութեան համաժողովի որոշումները ուղարկուելու են բոլոր պետութիւններին։

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Խաղաղութեան համար բազմաթիւ երկրներում գործող մարմիններից կազմուած այս „խաղաղ“ համաժողովը, համարձակ կարելի է ասել, ամենանշանաւորն էր իր կարգի հիմնարկութիւնների մէջ։ Մասնակցում էին ժողովին Գերմանիա, Արգենտինա, Բէլգիա, Դանեմարկ, Իսպանիա, Միացեալ Նահանգներ, Ֆրանսիա, Մեծ-Բրիտանիա, Յունաստան, Ունգարիա, Իտալիա, Նորվէգիա, Հոլանդիա, Փորթուգալիա, Ռումանիա, Ռուսաստան, Սերբիա, Շվէցիա, Զուիցերիա։ Այս բոլոր երկրներում ցրուած խաղաղութեան բազմաթիւ ընկերութիւնները անդամակցութեան, գործակցութեան են գրաւել գիտութեան, գրականութեան, քաղաքական և հասարակական գործունէութեան մէջ ամենայայտնի մարդիկ՝ սկսած մինիստրներից, դիւանագէտներից, և բուրժուազիայի յայտնի ներկայացուցիչներից մինչև կարմիր գոյնի սոցիալիստներ (Փերրի, Վանդերվելդ և այլն)։ Համաժողովը գործում է համաձայն միջազգային օրէնքների, նպատակ ունենալով մշակել, լայնացնել այդ օրէնքները և վերջ ի վերջոյ ազգերի մէջ փոխադարձ դժգոհութիւնների հետևանք — պատերազմները՝ փոխարինել միջազգային միջնորդ դատարանով։

Ներկայ համաշխարհային ժողովը թուով 9-րդն է և, ինչպէս միշտ, ներկայ դէպքում ևս կիսապաշտօնական բնաւորութիւն ունի. նա գտնւում է ֆրանսիական կառավարութեան հովանաւորութեան տակ։ Ահա ինչու ժողովի նիստերը յանուն կառավարութեան բացեց սեպտեմբերի 30-ին ֆրանսիական մինիստր Միլլերան, որից յետոյ կարդացուեցին նաև հանրապետութեան նախագահ Լուբէյի և արտաքին գործոց նախարար Դելկասէի նամակները, որոնցով նրանք ցաւ էին յայտնում, որ Փարիզից բացակայ գտնուելով՝ անկարող են ներկայ գտնուել համագումարի բացման։

Այդ ժողովին մասնակցող պ. Առաքելեանը՝ օգտուելով օրակարգի 10-րդ կէտից, որը թոյլ էր տալիս խօսելու „չնախատեսնուած հարցերի“ մասին, նախ քան համագումարի բացուելը, ներկայացրել էր կարգադրիչ մասնաժողովին մի յիշատակագիր „Հայկական հարցը խաղաղութեան տեսակէտից“ վերնագրով։ Յիշատակագիրը ստորագրել են 18 հոգի, որոնց թուումն են 11 հայ և հետևեալ յայտնի անձնաւորութիւնները օտարներից — Պետերբուրգի գիտութիւնների ճեմարանի թղթակից-անդամ պրոֆէսսոր Մաքսիմ Կովալէվսկի, Մոսկվայի „Ռուսսկիա Վեդոմոստի“ լրագրի խմբագիր Վ. Սոբոլեվսկի, Բրիւսէլի համալսարանի պրոֆէսսոր Ե. Դը-Ռոբերտի, հրապարակախօս-սոցիոլոգ Գ. Նովիկով, միջազգային իրաւունքի պրոֆէսսոր Բրիւսսէլում Հ. Լաֆոնտէն, ազգերի

մէջ իրաւարար ատեան հաստատելու ֆրանսիական ընկերութեան քարտուղար՝ պրոֆէսոր Լ. Մառիլիէ, ֆրանսիական խաղաղութեան ընկերութեան նախագահ Լիւսիէն Լէ-Ֆուայէ։

Համագումարի այն մասնաժողովը, որ պէտք է քննէր բոլոր նոր առաջարկութիւնները, գտաւ, որ հայկական հարցը իսկապէս կարելի է ընդունել „չնախատեսնուած հարցերի“ շարքը, որոնք ունեն այժմէութեան բնաւորութիւն և որոշեց ներկայացնել համաժողովին։

Հոկտեմբերի 5-ն է։ Համաժողովների համար ցուցահանդէսում յատկացրած ահագին դահլիճում հաւաքւած են բազմաթիւ ժողովականներ և ունկնդիրներ։ Նախագահում է յայտնի գիտնական ֆիզիօլոգ Շարլ Ռիշէ, պատուաւոր նախագահ է Ֆրեդերիկ Պասսի։ Ժամը մօտաւորապէս 4-ին ճաշից յետոյ նախագահը սեղանի վրայ է դնում „հայկական հարցը“ և հրաւիրում է պ. Նովիկովին կարդալ ընդունւած յիշատակագիրը։

Բերենք այստեղ այդ յիշատակագրի ամփոփումը.

Հայերի դրութիւնը Տաճկահայաստանում այն խնդիրներից մէկն է, որ ամենայն իրաւամբ արժանի է համաշխարհային խաղաղութեան ձգտող մի համաժողովի ուշադրութեան։ Եւ ներկայ համաժողովը ոչ միայն իրաւունք ունի հայկական դժբախտ խնդիրը շօշափելու, այլև նա պարտաւոր է այդ անել։ Իրաւունք ունի, որովհետև մեր խնդիրը ոչէ պետութեան վերաբերող ներքին խնդիր չէ, այլ միլազգային իրաւունքի հարց, հաստատւած Բերլինի դաշնագրի 61-րդ յօդւածով ու 1895 թւի մայիսի 6-ին մեծ պետութիւնների ձեռքով մշակւած և նոյնիսկ սուլթանից ստորագրւած բարենորոգումների ծրագրով։ Պարտաւոր է, որովհետև խաղաղութեան նախկին ժողովներում ընդունւած վճիռների և միջազգային օրինագրում տեղ գտած 17-րդ յօդւածի համաձայն՝ „Ազգերը իրաւունք ունին մի պետութեան համար, որը պատճառում է վնաս մի ուրիշին իր եկամուտները վատնելով կամ որը կազմակերպում է կամ թոյլ է տալիս իր հպատակների մի մասի կոտորած,— հաստատել հոգաբարձական խորհուրդ“։

Մենք չենք առաջ բերի այստեղ հայերի կրած տառապանքները, այն սպանդանոցները, որ 1894 թւից սկսած սահմանւած էին հայերին մորթոտելու համար, արեան այն գետերը, որ միշտ հոսում են Հայաստանում մինչև Սասունի վերջին կոտորածը Սպաղանքում—տալիս են հայկական հարցին միցաւագին այժմէութիւն։ Մենք չենք էլ փաստաբանի հայերի իրաւունքները, որովհետև բոլորիդ յայտնի է մեծ պետութիւնների խոստացած հովանաւորութիւնը մարտիրոս հայ ժողովրդին։ Մենք կը պնդենք միայն, որ այն ժամանակ, երբ հայերը գիտակցում են իրենց իրաւունքները. այն ժամանակ, երբ նրանք սպանիչ մի լուծի տակ, զրկւած են գոյութեան ամենատարրական պայմաններից, բնական է, որ նրանք ստիպւած են լարել իրենց բոլոր ուժերը, որպէսզի կամ իրենց համար մի տանելի դրութիւն ձեռք բերեն և կամ ջնջւեն, անհետանան աշխարհի երեսից։ Եւ այս պայմաններում, պարոններ, միթէ՞ գտնում էք դուք, որ համաշխարհային խաղաղութեան մեծ գործի համար մըշտական մի սպառնալիք չէ նաև հայկական դատը։ Բայց տուէք այդ ժողովրդին ապրելու և իր աշխատանքի արդիւնքներից օգտւելու կարելիութիւն, և նա կը նուիրի Արևելքում քաղաքակրթութիւն տարածելու իր պատմական կոչման։ Աւելի հեղինակաւոր ձայներ, քան մեր ձայնն է, ձեզ կը հաստատեն, որ այս ժողովուրդը իր անցեալով, իր տրադիցիաներով և ընդունակութիւններով միանգամայն կանգնած է այն բարձրութեան վրայ, որը համապատասխանում է այդ կուլտուրական դերին, և որ նա ամէն անգամ, երբ նրան թողել են մի փոքր հանգիստ, նա ամենայայտնի կերպով քաղաքակրթութեան միջնորդ է հանդիսացել լուսաւոր Արևմուտքի և խաւար Արևելքի միջև։ Բայց չէ՛։ մեր նպատակը չէ մի կոչ ուղղել դէպի ձեզ. ներկայ խաղաղութեան համաժողովի խնամակալ կոմիտէի ցանկում մենք տեսնում ենք բազմաթիւ անձնաւորութիւնների անուններ, որոնք Ֆրանսիայում և ուրիշ երկիրներում խօսքով ու գրչով բարձրաձայն արդէն վկայել են իրենց համակրութիւնը դէպի մեր դժբախտ ժողովուրդը։ Մեր ցանկութիւնն է, որ այժմ, երբ այդ բոլոր անձնաւորութիւնները ժողոված են այստեղ, միացեալ ուժերով և աւելի ջերմ քան երբևիցէ, գծագրեն որոշ դիմումներ և ջանքեր, որոնց նպատակը լինի ներգործել կառավարութիւնների ու հասարակաց կարծիքի վրայ և ազատել վերջապէս հայ ժողովուրդը իր ներկայ վիճակից։

Զեկուցումը կարդալուց յետոյ Պ. Նովիկովը առաջարկեց համագումարին հետևեալ որոշումը, որը մշակել էր զեկուցումը քննող մասնաժողովը.

„Խաղաղութեան 9-րդ համաշխարհային ժողովը, ծանօթանալով պպ. Գամբարեանի, Կովալեվսկու, Սօրօլեվսկու, Լա-Ֆոնտէնի, Դը-Ռօբէրտիի, Նովիկովի, Լիւսիէն Լէ-Ֆուայէի, Առաքելեանի, Լորիս-Մելիքեանի եւ ուրիշների յիշատակագրին, կարծիք է յայտնում, որ հայերի կոտորածները ներկայացնում են վերջին ժամանակներումս կատարւած ամենագարշելի գործերից մէկը։ Համաժողովը յայտնում է իր համակրութիւնը այս դժբախտ ժողովրդին եւ փափաքում է, որ տաճկական կառավարութիւնը հարկադրւի յարգել հայերի անժխտելի իրաւունքները, որոնք երաշխաւորւած են Բերլինի դաշնագրով“։

Համաժողովը միաձայն ընդունում է այս առաջարկը։ Բայց ահա խօսք է խնդրում նախագահից ռուս յայտնի փիլիսոփայ ու սոցիօլոգ Դը-Ռոբէրտին, մի շատ յարգւած անձնաւորութիւն, և դիմում է ժողովին հետևեալ ազդու խօսքերով, որ մենք բերում ենք համառօտակի.

Այն դժբախտ հարցը, որ յայտնի է „հայկական հարց“ անունով, ինձ թւում է, որ պահանջում է մեզանից աւելի խիստ որոշում, քան մասնաժողովի կողմից մեզ առաջարկածը։ Ինձ թւում է, որ խեղճ Հայաստանը, ինչպէս միշտ, ներկայ դէպքում ևս զոհւում է այժմէութիւն ունեցող բօերական և չինական այն երկու հարցերին, որոնցմով մենք զբաղւեցանք այնքան երկար։ Սակայն հայկական հարցը պակաս հետաքրքիր չէ քան բօերականը։ 300 հազար մարդ, կին և երեխաներ՝ մատնւած սրի բերանին մի վեհապետի հրամանով — սա մի աւելի սոսկալի երեւոյթ է, որ պէտք է մոռնչեցնէ համաշխարհային գիտակցութիւնը։ Ի՞նչ պէտք է ասէ մեր ժամանակների մասին անողորմ պատմութիւնը։ Եւրոպան վաղուց իվեր պարտաւորւել է ապահովել Հայաստանի խաղաղութիւնը, ստիպելով Տաճկաստանին բարենորո-

գումներ մտցնել երկրում։ Ինչո՞ւ նա չէ արել այդ մինչև այժմ։ Անտարբերութեան և վատութեան այս ի՞նչ հոգմ է, որ փչում է մեր օրերում քաղաքակրթուած աշխարհի վրայ. այս ի՞նչ անզգայութիւն է, որ թոյլ է տալիս մեզ սառնասիրտ ականատես լինել ամենասոսկալի ոճիրներին։ Չէ, տիկիններ, և պարոններ, մենք պարտաւոր ենք աւելին անել հեկատոմբների և աւերակների տակ թաղուած Հայաստանի համար, և ես առաջարկում եմ մանաժողովի որոշման աւելացնել նաև հետևեալը“.

„Համաժողովը ցաւում է, որ պառակտումը, նախանձը և իւրաքանչիւր պետութեան մասնաւոր շահերի նեղ հասկացողութիւնը խանգարել են վերոյիշեալ դաշնագրերը ստորագրող կառավարութիւններին կատարել իրենց ամենաճշգրիտ պարտականութիւնները դէպի մի ժողովուրդ, որին հովանաւորելը ստիպողական է նրանց համար, համաձայն մի պաշտօնական պարտաւորութեան, որ ունի օրինական արժէք։ Համաժողովը յոյս ունի, որ համաշխարհային խղճի արթնացումը և քաղաքակիրթ աշխարհի զայրոյթը կը մղեն վերջապէս եւրոպական կառավարութիւններին մի արմատական վճիռ տալու հայկական ցաւագին հարցին, ինչպէս այդ տեղի ունեցաւ դեռ վերջերս Կրէտէի համար“։

Պ. Ռօբէրտիից յետոյ դիմում է համաժողովին թիւրքաց „Մէշվէրէթ“ լրագրի խմբագիր պ. Ահմէդ-Ռիզան և սկսում է իր ճառը մի ոստիկանական յայտարարութեամբ։ „Զարմանում եմ — ասում է նա — որ մասնաժողովի երէկւայ նիստին հայերի առաջարկը քննելիս՝ ռուսաց կառավարութեան ներկայացուցիչ պ. Ռաֆալովիչը պահանջում էր մասնաժողովի առաջարկում մտցնել նաև Ս. Ստեփանոյի դաշնագրութիւնը, թէև Բերլինից յետոյ այդ դաշնագրութիւնը այլևս գոյութիւն չունի։ Էլ աւելի զարմանում եմ, որ մասնաժողովի որոշման ձայն տուեց այդ „պաշտօնական պատգամաւորը“, որի կառավարութիւնը հակառակեց Անգլիային 1895 թ-ի մայիսեան ծրագիրը իրագործելու խնդրում“։

Անկասկած. Ստամբոլի լրտեսական նախասենեակներում իշխող բարոյական դօգմաներին աւելի հաւատալով՝ քան մարդկային մտքի ու խղճի պահանջներին, պարոնը ուզեց իր այդ յայտարարութեամբ ասել, որ ռուս կառավարութեան ինտրիգներն են ստեղծել և այսօր համաժողովի առաջ բերել իր, Ահմէդ-Ռիզայի, ինչպէս նաև սուլթան Արդիւլ-Համիդի համար, ատելի „հայկական հարցը“։ Արևելեան այլասերուած կուլտուրայի մի զաւակի հաշիւ էր դա։ Համաժողովում կան բազմաթիւ համակրելի, բայց ռուսատեաց տարրեր — անգլիացիներ, ֆրանսիացիներ և էլն։ Շահագործել նրանց հակառուսական տրամադրութիւնները և այդպիսով յետմղել „հայկական հարցը“ — ահա այդ հաշիւը։ Եւ բարոյական այդ տիպարի մարդն է, որ ինքն իրեն համարում է „երիտասարդ թիւրքերի“ ներկայացուցիչ։ այդ մարդն է, որ տարիներով Փարիզում ընկած՝ ուրիշ ոչինչ չգիտէ, բայց եթէ հայերի հասցէին ուղղած ստոր զրպարտութիւններով՝ շահագործել մի շարք յարգելի մարդկանց հաւատը։ այդ վատ թիւրքն է — թող ներեն մեզ ազնիւ թիւրքերը — որ խաղաղութեան համաժողովի բացման օրից և՝ առաւօտեանից մինչև երեկոյ չէր հեռանում դահլիճից, ուզենալով անշուշտ իրեն յատուկ միջոցներով եթէ ոչ իր ազգի համար էլ մի բան անել, գոնէ լռեցնել մի ուրիշ ազգի բողոքը — հայկական բողոքը։ Եւ ո՞վ գիտէ մինչև ո՛ւր կը գնար իր հրապարակական ինսինուացիաներում պ. Ռիզան, բայց ժողովականների շշուկներ ու բողոքները կանգնեցրին նրան և նա տօնը փոխած շարունակեց այսպէս.—

„Համաժողովը չպէտք է զբաղի Տաճկաստանում ապրող առանձին ազգութիւնների խնդրով այն հիման վրայ, որ այնտեղ պայմանները բոլոր ազգութիւնների համար միևնոյն են։ Հայերի համար առանձին բարենորոգումների խնդիրը միտք չունի վերջապէս այն տեսակէտից, որ հայերը ոչ մի տեղ մեծամասնութիւն չեն կազմում“։ Ահա ինչու, պ. Ահմէդի կարծիքով, համաժողովը աւելի նպատակայարմար ընթացքի կը հետևէր, եթէ՝ մերժելով մասնաժողովի և պ. Ռօբէրտիի առաջարկները, ընդունէր հետևեալ որոշումը.

„Համաժողովը ցաւում է, որ մեծ պետութիւնները փոխանակ նպաստելու ընդհանուր բարենորոգումների իրագործմանը Տաճկաստանում, առանց խտրութեան ազգի և կրօնի, պաշտպանել են և պաշտպանում են կամայական ռէժիմը մի սուլթանի, որ սիստեմատիքաբար հակառակում է քաղաքական կամ հասարակական ոևէ բարելաւութեան և որը իսկական պատճառն է այն վարչական անկարգութիւնների և դրժբախտութիւնների, որոնք ճնշում են մուսուլմաններին նոյն չափով, ինչ չափով և քրիստոնեաներին“։

Պարոնին պատասխանում են՝ պրոֆէսսոր Մառիլիէ, Միքայէլ Յովհաննիսեան և „Անահիտ“ հանդէսի խմբագիր պ. Զօպանեան, պօլսեցի։

Պրոֆէսսոր Մառիլիէն մի փայլուն ճառի մէջ շեշտում է, որ ինքը միանգամայն հակառակ է պ. Ահմէդ-Ռիզայի առաջարկութեան ու ջերմ կողմնակից մասնաժողովի և Ռօբէրտիի կարծիքներին։ „Ժողովը չպէտք է մոռանայ — ասում է յարգելի պրոֆէսսորը — որ Թիւրքիան այն երկրներից է, որոնք իրենց ընդհանուր բարեկարգման համար պահանջում են անորոշ երկար ժամանակ, այն ինչ հայերի դրութիւնը կարօտ է անմիջական օգնութեան, և եթէ այդ օգնութիւնը չտրուի նրանց, նրանք կը ջնջուեն ամենամօտիկ ժամանակում։ Դրա համար հարկաւոր էլ չէ, որ վերանորոգուեն 1895-1896-ի ընդհանուր կոտորածները։ դրա համար միանգամայն բաւական են այն մասնակի կոտորածները, ընդհանուր թշուառութիւնն ու անապահովութիւնը, որոնք անընդհատ իշխում են դժբախտ Հայաստանում։ Ահա ինչու համաժողովը՝ իր որոշումներում միանգամայն առանձին տեղ տալով „հայկական խնդրին“, կը կատարի միմիայն իր ամենատարրական, անհրաժեշտ պարտականութիւնը։ Եթէ մի անյարմարութիւն կայ պ. Ռօբէրտիի յաւելումի մէջ — Կրէտէի օրինակը, որ գուցէ վէճերի առիթ տայ — համաժողովը կարող է իբրև ելակէտ ընդունել 1895 թ-ի մայիսեան ծրագիրը, — մի ծրագիր, որը մշակել և ստորագրել են թէ պետութիւնները և թէ ինքը սուլթանը։ Եւ եթէ մեծ պետութիւնները հայերի համար անհրաժեշտ բարենորոգումների կարիք էին զգում դեռ 1895 թ-ի սկզբին, ապա ուրեմն դրանից յետոյ տեղի

ունեցած անըրևակայելի անգթութիւնները աւելի ևս հարկեցուցիչ են դարձնում 61-րդ յօդուածի հիման վրայ հայերի համար պահանջւող բարեփոխումների և ապահովութեան երաշխաւորութիւնները":

Միահամուռ ծափահարութիւններ։

Պ. Մ. Յովհաննիսեանը, կամենալով հայկական և թիւրքական հարցերը որոշապէս զատել, ասաց հետևեալը.

„Տիկիններ և պարոններ. Թիւրք պատգամաւորի խօսքերը ձգտումն ունին ի մի ձուլել հայկական և ընդհանուր տաճկական խնդիրները — երկու խնդիրներ, որոնք էապէս տարբեր են իրարից։ Մինչդեռ Օսմանեան կայսրութեան ընդհանուր բարենորոգումը տեղական մի խնդիր է, որ վերաբերում է սուլթանների ներքին քաղաքականութեան — հայկական հարցը վաղուց արդէն մտած է միջազգային իրաւունքի մէջ։ Նա դրւել է պաշտօնապէս դիւանագիտութեան կողմից դեռ 22 տարի սրանից առաջ և Եւրոպան հանդիսաւոր պարտականութիւններ է ստանձնել միջամտելու շարունակ յօգուտ հայերի։ Բայց մի մոռացէք մանաւանդ, տիկիններ և պարոններ, այն բարձրագոչ փաստը, որ հայութիւնը տւել է 300,000 զոհ՝ խողխողւած օսմանեան վեհապետի հրամանով։ Միմիայն այդ ջարդը, որ մեծագոյնն է մարդկային պատմութեան արհաւիրքներից՝ հոգի ու մարմին է տալիս Բերլինի դաշնագրի 61-րդ յօդւածին... Կարելի՞ է վերջապէս այնքան մօտ համեմատութիւն գնել հայ և թիւրք ժողովուրդների վիճակի մէջ։ Այն ժամանակ, երբ, միւս հաւասար պայմաններում, թիւրքերը լիակատար կերպով օգտւում են իրենց նախնական-մարդկային իրաւունքներից — այսինքն՝ ունեն ապահովութիւն կեանքի և ստացւածքի, — Հայաստանը մեթոդիք բնաջնջման բեմ է ներկայացնում. ամբողջ հայ ժողովուրդը — խաղաղ և անզէն — մատնւած է Կարմիր հրէշի գազանութիւններին... Այո՛, տարբերութիւնը երկու դրութիւնների մէջ խոր է, անվերածելի։ Համաժողովը պարտաւոր է ուշադրութեան առնել այդ տարբերութիւնը և չմոռանալ, որ տիեզերական խաղաղութեան նպատակներից շատ հեռու է մի դրութիւն, ուր հայերը շարունակում են հեծկլտալ մի բարբարոս ռեժիմի տակ, որը այնքան անգամ նշաւակւել է քաղաքակրթւած աշխարհի ամենահեղինակաւոր ձայներով":

Ջերմ ծափահարութիւններ։

Պ. Զօպանեանը յայտնում է, որ պ. Ահմէդ-Ռիզան իր ընդհանուր առաջարկութիւնը հանդէս բերելով՝ ուզում է խանգարել հայերին և այդ պատճառով նա այլևս չէ յարգելու պ. Ռիզային, ինչպէս յարգում էր մինչև այժմ (Տրտունջներ)։ Բայց ժողովը պէտք է ինկատի ունենայ հայերի ծանր կացութիւնը և կայացնի առանձին որոշում։

Նախագահ Շարլ Ռիշէն դէմ չէ պրօֆէսօր Դը-Ռօբէրտիի յաւելման, միայն անյարմար է գտնում Կրէտէի դէպքի յիշելը։ Դը-Ռօբերտի առաջարկում է „դիւանագէտների ձեռքերը չկապելու" համար, այդ համեմատութեանը աւելացնել „օրինակ" խօսքը։

Պատւաւոր նախագահ Պասսին — մի զառամեալ ծերունի, որ յայտնի է իր երկարամեայ գործունէութեամբ խաղաղութեան կազմակերպութիւններում — գրաւիչ պերճախօսութեամբ ուզում է, որ պահպանւի „Կրէտէ" խօսքը, բայց մի ուէ այնպիսի ձևով, որից չհետևէր թէ համաժողովը ձգտում է պարտաւորեցնել պետութիւններին բարելաւել հայերի դրութիւնը անպատճառ Կրէտէի սահմանադրութեան համաձայն։

Մի ուրիշ ճառախօս — շվեդացի պ. Վուարօլ — առաջարկում է ընդհանրացնել ճնշւած ազգերի հարցը և՝ ինկատի առնելով իռլանդական, ֆինլանդական, ալժիրական և ուրիշ խնդիրները, ընդունել այսպիսի մի որոշում.

„Համաժողովը ցաւում է, տեսնելով, որ զանազան կառավարութիւններ շարունակում են գործադրել ամօթալի ճնշումներ իրենց տիրապետութեան ենթարկւած ազգութիւնների վերաբերմամբ":

Վերջապէս նախագահը փակում է վիճաբանութիւնները և սկսում է քւէարկութիւն։

Քւէարկւում է նախ պ. Ռիզայի առաջարկը։

Մերժւում (ծափահարութիւններ)։

Ապա՝ Վուարօլի առաջարկը։

Մերժւում։

Վերջումը՝ մասնաժողովի առաջարկը Դը-Ռօբէրտիի յաւելումով (բացի Կրէտէի օրինակը)։

Ընդունւում է ահագին մեծամասնութեամբ։

Բուռն ծափահարութիւններ։

Խաղաղութեան համաժողովի որոշումները, որոնք հետևեալ օրը հրատարակեցին ամբողջ մարդկութեան ուղղած մի կոչի ձևով, պէտք է անմիջապէս հաղորդւէին ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դէլկասէին, իսկ վերջինս իր կողմից այդ որոշումները պիտի ներկայացնէ եւրոպական բոլոր պետութիւններին։

ՆՒԻՐԱՏՒՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Սկզբնակից 20 ռուբլի, Կ. Ց. Տ. Ա. 25, Խաչլուայ լճից 18 ռ. 10 կօպ., Արշալոյսից 10, Սկսնակից 20, Կոտորածից 20, Շան քաղաքից 100, Սկսնակից 25՝ Ընդամէնը 238 ռ. 10 կօպ.։

ՆԱՒԱՀԱՆԳՍՏԻ Կօմիտէն՝

Դաւիթ Բ.-ից (Քարազի Մ.-ի հարսանիքում հանգանակւած 7 ռ. 25 կօպ., Սպարապետի եւ Դաւիթ Բ.-ի միջոցով մեր թշնամուց 2 ռ., Դուրգէնից 50 կօպ., ԶՈՐԱՓՈՐԻ չանչալներից 5 ռ., ՃՐԱՇԼՆԻ „Գրգուռ" խմբից 10 ռուբլի։ Գումար 24 ռուբլի 75 կօպէկ։

ԱՊԱՌԱԺԻ Կօմիտէն՝

1899 թ. յուլիս-դեկտեմբեր ամիսներին՝ պատկերներից 10 ռուբլի։ Նեցուկից 50, Նոյեմբեր 13-ից 21, 1900 թ. յունւար-յունիս ամիսներին՝ Մնացողից 50, Օհանից պատկերների համար 20, Թիժուց 10, Տիկին 10 Մանուկ 23. 50, Լօշալալա 90, Ոյժ 100, պատկերներից 20, կանանցից 50. 50, Գազանից 13 ռ.։ Գումար 387 ռուբլի։

ԴԱՐԻԲ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

(ԱՐՏԱՏՊԱԾ „ԴՐՕՇԱԿ"-ԻՑ)

Լոյս տեսաւ առաջին գրքոյկը։ Գինն է 50 սանտիմ, ճանապարհածախսով 60 սանտիմ։ Դիմել՝

Rédaction du Droschak, Genève (Suisse)